

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

(Համառոտ տեսութիւն)

Գ

Նոր-Նախիջևանի ձեռագրերն ընդհանրապէս մեր ձեռագրերի բոլոր միւս հաւաքածոների մէջ կարող են պատուաւոր տեղ բռնել իւրեանց թուի շատութեամբ, հնութեամբ, գրութեան արուեստի պատուականութեամբ, պատկերների, նկարների, ներկերի գեղեցկութեամբ, լիատակարանների պատմական նշանակութեամբ, մագաղաթի նրբութեամբ և արլն. Նոքա բոլորն էլ գրուած են Ղրիմի զանազան քաղաքներում ու գիւղերում—Կաֆալում, Սուրխաթում, Բախչիսարայում, Ղարսսուքաղարում, Հին-Ղրիմում, Օրդուքաղարում, Սովուխ-Չորախ գիւղում, Սրուկ-Թլակ գիւղում, Շահնշահ գիւղում, Աղախում, Լեհաստանի իլով քաղաքում, Երուսաղէմում, Էիլիկիայում, Միջագետքի Բերդաձոր կամ Բերիաջուկ գիւղում, Հալաստանի Կարին քաղաքում, Սեբաստիայում, Վարազալ Ս. Նշանում, Բաքերդի Վահան-շէն գիւղում, Սեբաստիոլ ձանճի գիւղում, և արլն և արլն. Արժանի է ուշադրութեան արլն հանգամանքը, որ ձեռագրերի մէջ չկալ մէկը, որ գրուած լինի Անիում, թէև Նախիջևանցիք Անու գաղթականներից լինելով, պէտք է որ ուրիշ հնութիւնների հետ միասին և ձեռագրեր բերած լինէին իւրեանց հալրենիքից:

Ձեռագրերի մեծ մասը գրուած է Կաֆալում. Ղրիմի հալ գաղթականութեան ծաղկած ժամանակ ալդտեղ գոլութիւն է ունեցել գլխաւորապէս հոգեորականներից բաղկացած մի բարեպաշտ գիտնական դասակարգ, որ Հալաստանից բերած լի-

նեւով գրադրութեան, նկարչութեան և ոսկելու ու ծաղկելու արուեստները, պահպանել ու շարունակել է նոյն արուեստները և նոր հայրենիքում, որդէց-որդի աւանդելով նոցա ուսմունքը: Դոքա, հալ գաղթականների ալդ գիտնականներն ապրելիս են եղել զլիաւորապէս կաֆալի քառասուն եկեղեցիների խցիկներում և «ընդ հովանեաւ» այս կամ այն եկեղեցու արտադրելիս են եղել ընտիր օրինակներից զանազան ձեւագրեր: Մի մասն էլ դոցանից ապրելիս է եղել վանքերում, տիրապէս Ս. Խաչ վանքի «Հոգէտներում», ինչպէս հին ճգնաւորները, և շարունակելիս ու զարգացնելիս է եղել նոյն արուեստները: Որ մի ալդպիսի գիտնական դասակարգ եղել է Ղրիմում, որ հին ճգնաւորների նման մենաւոր կեանք է վարել և մեծ նեղութիւններով ու բաղմաթիւ զրկանքներով ձեւագրներ արտադրելու բարեպաշտ գործով է զբաղուել—, ալդ երևում է և ձեւագրերից մի քանիսի լիշատակարաններից, սրոնց մէջ ուղղակի լիշուած են այն մենաւոր խցիկները կամ «Հոգէտները», որտեղ ճգնել ու գրել են նոքա Ս. Լուսաւորչի ծաշոցներից մէկի լիշատակարանի մէջ, օրինակի համար, մենք կարդում ենք. «Եւ ծրագրութիւն մատենագիր լիշատակարանիս ի լաշխարհիս հոնաց՝ որ ալծմ կոչի Ղրիմ, ի մեծի գիւղաքաղաքիս Ղարասու ի քրիստոնեա ժողով վարիս ի հողալարմար տներս առ ափս եզեր գետոյն ընդ հովանեաւ սրբանորոգ տիրաբնակ սուրբ Ազսէնդ եկեղեցուս, և ալ սրբոց խորանցս՝ և կաթողիկոսութեանն տէր Յակոբին. ընդհանուր ամենայն Հայաստան աղգիս: Եւ լարհիական եպիսկոպոսութեանն տէր Գրիգորի՝ լալսմ նահանգիս, ամենայն հիւսիսական կողմանցս վերադիտողի. որ լալսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս ի ճանապարհին Նրուսաղէմալ. և եթող մեզ սուգ մեծ. և տրամութիւն անմխիթար՝ որ և լոնտէրունչ միաւով մեր՝ ոչ գիտեմք դառաջիկան թէ զինչ լինելոց է: Դարձեալ լիշեալիք զուսուցող զրիս զհոգեւոր հայրն իմ տէր Յովանէս քահանայն ժրաջան գրիչն, որ բաղում աշխատանաւք և ջանիւք ուսոյց մեզ արհեստ դրագրութեան. և մեր սկսեալ դաստուածաշունչս աւարտն արարաք՝ և ալլն»:

Նոր-Նախիջևանի ձեւագրերի մեծ մասը հասարակ կաշեպատ փալտէ կաղմ ունի, փոքր մասն արծաթապատ է, կան և սակաւաթիւ թաւապատ աւետարաններ: Կաղմների վերալ մի քանի ձեւագիր ունին արծաթեալ մեծ ու փոքր խաչեր ու

ղարդեր լիշատակարաններով, մի քանիսի կազմն էլ ներքին-
կազմից պատած է մտաքսէ գոյնզգոյն կտորներով։ Ձեռա-
գրերից շատերը գրուած են մագաղաթի վերալ, որոնցից մի-
քանիսը շատ նուրբ և ընտիր տեսակից են։ Երեւում է, որ
հմուտ վարպետների ձեռքով են պատրաստուած և շատ
դժուարութեամբ ու մեծ ծախքով ձեռք բերուած։ Շատ ձե-
ռագրերի մէջ կազմի ու գրքերի կողքերն ամրացնելու համար
գործածուած են հին ընտիր մագաղաթի թերթեր, առնուած
Հալոց աւելի հին, երկաթագիր ակտարաններից, կան և եր-
բայական, լատինական։ Ընկալան ձեռագրերից առնուած
թերթեր, դարձեալ կազմի համար գործածուած։ Ձեռագրերից
շատերը պատկերազարդ են։ Նոցանից մի քանիսի պատկերներն
ալյնքան նուրբ, գեղեցիկ ու ճարտարութեամբ են քաշուած,
ծաղկուած, ոսկուած, որ լաջողութեամբ կարող են մրցել մեր
լուսագոյն ձեռագրերի մէջ գտնուած պատկերների հետ։ Կալ,
ի միջի ալոց, մի ձեռագիր, որի պատկերները քաշուած են
մեր պատկերահանութեան ու զարդագրութեան գեղարուեստի
մէջ լալտնի Սարգիս Պիծակի ձեռքով։ Առ հասարակ երեւում
է, որ նկարների, տառերի ու զարդերի ոսկողները, ծաղկող-
ները, գունողները շատ հմուտ են եղել իւրեանց արուեստին,
ապա թէ ոչ՝ անկարելի է, որ ալսքան ժամանակ անցնելուց
և ալնքան անխնամբ պահուելուց լետոյ էլ նոցա ոսկին, գոյ-
նը և ներկն ալնպէս լաւ պահպանուէին։ Մի քանի պատկեր-
ներ կան, որոնք ալնպէս լաւ են պահպանուած, որ, կարծես,
նկարիչը նոր է միայն վերջացրել նոցա։

Պատկերները մեր ձեռագրերի սովորական պատկերներն
են—Աւետարանիչների մեծադիր պատկերներն՝ իւրաքանչիւրն
իւր ակտարանի սկզբում, Աւետման, Մենդեան, Քառասնո-
րեալ գալստեան ի տաճարն, Մկրտութեան, Պաշտառափալու-
թեան, Խաչելութեան, Յարութեան, Համբարձման, Դժոխոց
աւերման, Հոգեգալստի, Վերջին դատաստանի և ալն մեծա-
դիր պատկերները ակտարանների սկզբում կարգով և աւե-
տարանների մէջ գործող անձանց և կատարուած անցքերի
փոքրադիր պատկերները լուսանցքների ալն տեղերում, որ-
տեղ պատկերներին համապատասխան անցքերն են պատմ-
ւում, խորանաղարդեր կանոնատախտակների համար, լու-
սանցքաղարդեր՝ թռչուններ, ծաղիկներ, ծառեր, օձեր, կա-
թուղիկէներ, խաչեր, աշտանակներ, և ալն և ալն։

Արժանի է ուշադրութեան եղնիկ Կողբացու պատկերը, որ մենք տեսնում ենք քաջուած Հաւաքածոներից կամ Վարդան—գրքերից մէկի մէջ, և նամանականդ Լեոն Երրորդ Ռուբինեանց թագաւորի պատկերը, որ գտնուում է աւետարաններից մէկի մէջ, Ոսկէ տեղի վերայ դրուած է ծաղկաւոր կրտորով պարածակուած ցած գահուքի պէս մի նստաւան, որի առաջ կանգնած է զլխաբաց, երկար ալեգարդ մազերով, և կարճ կլոր մօրուքով մի միջահասակ տղամարդ, նա հագած է երկար, մինչև ոտքերը հասնող պարեգօտ, որ ամեն կողմից շարժարուած է մէջը կապուտ ու եզերքն ոսկի շրջանակներով, որոնց մէջ նկարուած է առիւծ և դորա գլխավերնն արևի կամ մահիկի պէս մի բան: Այդ պարեգօտի վերալից ձեռքուած է մի կարմրագուն երկար լօղիկ, որի եզերքը պարեգօտի եզերքի նման ոսկեգուն տեղի վերայ նախշած է մէջմէջ կարմիր կապուտ բծերով: Պատկերի ձեռքը տրուած է ծաղիկ, իսկ զլխի վերայ ձևացրած է շրջանակաձև ճաճանչաւոր պսակի պէս մի բան, ինչպիսին մենք սովորաբար տեսնում ենք նկարուած սրբերի պատկերների զլխին: Երկու հրեշտականման կարմիր-կապուտ հագած էակներ, որոնք, կարծես, դուրս են ընկած օդի մէջ կամարը բռնող սիւնների խողակների լետից, բռնած են թագաւորի զլխին քռոցներ: Պատկերի ձախ կողմի վերևից ցած կապուտ ներկով խոշոր գլխազիր տառերով գրուած է. «Լեոն Որդ», իսկ աջ կողմը դորա շարունակութիւնը—«Հեթում թագ», որ պէտք է կարդալ «Լեոն որդի Հեթում թագաւորի»: Մենք կարծում ենք, որ դա Լեոն Երրորդի պատկերն է, որովհետև արև ձեռագիր աւետարանը, որի միջից կտրուած է Եղիւ և որի մէջ ալժմ նորից գետեղուած է արդ պատկերը, գրուած է Հեթում Առաջինի ժամանակ Հայոց ՈՂԸ (1249) թուին Տէր-Կոստանդին կաթողիկոսի (1220—1267) հրամանով և ծախքով Հռովմից բերած մագաղաթի վերայ և պատկանել է Լեոն Գին, որ ընծաւել է խրքոյ՝ «աստուածասէր, բարեփառ, կալսերածին և ծիրանասնունդ»: Սալիդ քաղաքի տիկին Տամֆիմիին կամ Տամֆիմէին, որ ԶԺԲ (1263) թուին խր ընտանիքով եկել էր խր հօր մօտ Կիլիկիա:

Ձեռագրերի մեծ մասը բոլորագիր են կարմրադեղ կամ ոսկած գլխազերեով, թռչնագրերով ու ծաղկազերեով. նամանականդ գեղեցիկ են աւետարաններից մի քանիսի առաջին:

երեսները, որոնք գրուած են համակ ոսկած և գոյնզգոյն ներկած խոշոր գլխազրերով: Մի քանի աւետարան չունին «իւր կնոջն չնացելով» գլուխը և Մարկոսի աւետարանից լետոյ գրուած «Յարուցեալ Յիսուս» կտորը, որոնք, ինչպէս լաւանի է, անվաւեր են և լետոյ են միայն գրուած. մի քանիսն էլ թէն ունին ալդ կտորները, բայց ալդպիսի ձեռագրերի մէջ դոքա, ալդ կտորները գրուած են իբրև լաւելուած աւանձին գլուխներով:

Աւետարանների կազմերի վերայ կայցրած մեծ ու փոքր արծաթեալ խաչերի վերայ տեղ-տեղ ուրիշ լիշատակարանների հետ միասին մենք կարդում ենք և «բժշկական» խօսքը: Գոքա բժշկական աւետարաններն են, որոնցից Հայաստանի զանազան խուլ անկիւններում նոյն իսկ գիւղացւոց խրճիթներում շատ է պահպանուած, այն ինչ միւս տեսակները, բժշկական չհամարուածները գլխաւորապէս հաւաքուած են վանական և եկեղեցական մատենադարաններում, եթէ միայն «մատենադարան» խօսքը կարելի է լատկացնել մեր եկեղեցիների ու վանքերի պատերի մէջ փորուած խոնաւ պահարաններին, կոտորուած արկղներին և ալ ալդ տեսակ ձեռագրեր պահելու համար նշանակուած անպէտք դարակներին, որոնց մէջ սովորաբար անկարգ թափուած պահոււմ են մեր ձեռագրերը: Գորա պատճառը պէտք է որոնել այն հանգամանքի մէջ, որ ալդ ձեռագրերը բժշկելու հրաշագործ համբաւ վայելելով ամբոխի աչքում, միշտ գրաւել ու դրաւում են բաղմաթիւ ուխտաւորներ, որոնց ջերմեւանդութեան արդիւնքը լինում է մի որոշ եկամուտ, որ նոքա, ալսինքն բժշկական աւետարանները բերում են կամ տալիս են իւրեանց տէրերին: Գիւղացիներից շատերը կամենալով տիրանալ ալդ եկամտին, ամենայն միջոց գործ են դնում ալդպիսի աւետարաններ ձեռք բերելու ու իւրեանց տներում պահելու համար, որից և առաջ են դալիս այն ցաւալի դէպքերը, որոնք լաճախակի տեղի են ունենում մեր գիւղական հասարակութիւնների մէջ: Վաւերներ, հայհոյանք, թշնամութիւն և մինչև իսկ զոդութիւն միշտ անպակաս են լինում ալդպիսի տեղերում, որովհետև աւետարանատէրերը մի անգամ ձեռք բերելով հրաշագործ աւետարանը, պահում են նորան ամենածածուկ քեղերում իւրեանց աչքի լուսի պէս և կտակում են իւրեանց որդիներին ու թոռներին, աւանդելով, որ նոքա ևս ալդպէս պինդ պա-

հեն սրբութիւնը, որպէսզի ընտանիքը չըրկուի իւր մշտական և հաստատ եկամտի աղբիւրից: Միւս գիւղացիներն էլ տեսնելով այդ, սկսում են նախանձել, և գործ են դնում զանազան միջոցներ խելու սրբութիւնները տէրերի ձեռքից և իրանց սեփականացնել: Նոքա կամ ծածուկ գողանում են նոցա, կամ արձակ-համարձակ աւաղակների պէս լարձակում են տների վերայ և փախցնում են աւետարանները, որից և առաջ է դալիս ալն հանգամանքը, որ բժշկական աւետարաններից շատերը, որոնք լաճախ լինում են շատ հին, ընտիր ձեռագրեր, փչացւում են և կորչում:

Հոգեւոր իշխանութեան պարտքն է, ի հարկէ, հետզհետէ զանազան միջոցներով ժողովել այդ թանգագին ձեռագրերն և ամիտիել Ս. Էջմիածնի մատենադարանում: Գորանով նա մի քանի նպատակի կհասնի. նախ, հալ գիւղական հասարակութիւնների միջից կվերացնէ կռուապատճառը, երկրորդ, կազատէ կորստեան վտանգից հալ գեղարուեստի այդ մնացորդները և, երրորդ, միջոց կտալ ուսումնականներին հեշտութեամբ նոցա գտնելու և գործածելու իւրեանց ուսումնական հետազոտութիւնների համար, թէև ալն էլ պէտք է տսել, որ ալդ բանը գլուխ բերելը հեշտ չէ, որովհետև գիւղացիք երբէք իւրեանց կամքով չեն լսմարում հրամարուել իւրեանց հարստութիւնից, գոնէ, եղած փորձերից շատերն անլաջող են եղել: Մասնաւոր մարդկանց պատկանածները պաշտպանւում են իրանց տէրերից, իսկ ուխտատեղիներին ու եկեղեցիներին պատկանածները տեղի ամբողջ հասարակութիւնից:

Մենք լիչում ենք մի դէպք, երբ Գանձակ գաւառի Գիւլիստան գիւղի նշանաւոր «Կարմիր» կոչուած հրաշագործ աւետարանը գողացել էին նորա տիրոջից և մի մեծ քրէական գործ էր բացուել դորա գողութեան հանգամանքներից: Նոյն «Կարմիր աւետարանը» գործի վերջնալուց լետիլ, երբ Հոգեւոր իշխանութիւնը լաջողեցրել առնել և դնել տեղի եկեղեցին, արդէն սկսել էր ծառայել լըրև եկամտի աղբիւր եկեղեցու երեցփոխի ու հոգևորականների համար: Լաւ լիչում ենք, թէ ինչպիսի խալտառակ և ամթալի տեսարանի հանդիպեցինք, երբ մի անգամ պատահեցինք Գիւլիստանում և կամեցանք տեսնել այդ աւետարանը: Այդ օրը բաղմաթիւ ուխտաւորներ էին հաւաքուել հրաշագործ աւետարանը համբուրելու համար մասնաւորապէս սարը եկած Սարովցիներից: Սրբ քա-

հանաճ հանդիսաւոր կերպով շարական ասելով հանդէս բերեց աւետարանը, մի առ մի սկսաւ բանալ նրա բաղմաթիւ թաղիկները և ուխտաւորները մեծ հաւատքով մօտեցան համբուրելու և խաչ-համբուր ձգելու, երկցփոխը դարձաւ դէպի ժողովուրդը և բարձր ձայնով հրաւիրեց նորան ջերմեռանդութեամբ մօտենալու և առատութեամբ նուէրներ տալու, որովհետեւ տէրտէրն լըրե թէ հարիւր լիսուն մանէթով կապալով է վերցրել աւետարանը, ուստի պէտք է լրացնէ արդ գումարը, թէ չէ՝ մեղք կլինի:

Վերոյիշեալ ղկարմիր աւետարանին գողութեան կամ գերեւարութեան դէպքի պէս մի դէպքի մասին էլ մենք կարողով ենք Նախիջևանի ձեռագիր աւետարաններից մէկի վիշատակարանում: «Այս սուրբ աւետարանս որ անկեալ էր ի ձեռն լօթաւնին առեալ էին Օրին ժամէն որ բերեալ էին ի քաղաքն Նիմնալ որ հանդիպեցաւ մեղ քէֆէցի մահտեսի Օվակէմս Պահչալսարալցի Ակոբի որդի Թորոսս որ այս սուրբ աւետարանս աղատեցինք ի գերութենէն որ մենք ոչ էինք մնացեալ Աստուած աղատեաց մեղ այս սուրբ աւետարանս բերինք խում ի քաղաքն Պահչալսարալ որ տվանք Պալլիսալալ լիշատակ ի դուռն սուրբ Օվաննէսին քէֆէցի մահտեսի Օվակէմին և ծնողացը հոգուն Պահչալսարալցի աճէմ Պիլաթէին որդուն պարոն Փիլիպոսին և ծնողաց հոգուն կամ գէ մեղաւոր և անարժան Պահչալսարալցի ակոբի որդի Թորոսին Լուսպարոնին ծընողացը հոգուն որ եղին սուրբ աւետարանս այս անուանի սուրբ եկեղեցին կարգացէք և լսեցէք ասէք Աստուած ողորմի ծընողացներուն հոգուն լիշեցէք հար մեղալեօվ որ լիշիլիշիք առաչի քրիստոսի ամէն զրեցաւ ի գիրս Թվին ՌձՂ-ին մալիսի ամսուն ի ին» ¹²⁾:

¹²⁾ Այդ աւետարանը, որ պատկերադարդ է, ներկայումս գտնուում է ս. Նիկողայոս եկեղեցում, Դա գրուած է 1722 թուին մի ոմն շապիկար, Լզեկիէլ քահանայի ձեռքով: Դորա կաղմի մի երեսին կայցրած արծաթեալ խաչի վերայ գրուած է. «Յիշատակ է սուրբ նշանս և բարեխօս օրի եղեալ երթ և էկող վաճառականացն ի դուռն օրի եղեալ սուրբ Աստուծածնի. Թվին ՌձՂ-ին. խուրմի շահպաղին բան է»:

Արժանի է ուշադրութեան ս. Նիկողայոս եկեղեցու խորհրդատեարներից մէկը, որի գրուելու թուականն այսպէս է որոշուած. «Արդ զրեցաւ սա ի լամի թուաբերութեան հալկադեան սեռի՝ քսան և մէկ լորելինի. և երկոորդ վեշտասանի:

Նախիջևանի բժշկական ակադարանները, թէև վաղուց արդէն կորցրել են իւրեանց հրաշագործութիւն անելու համբաւը, ուստի և հանդիստ մնում են իւրեանց պահապաններում, բաց ժողովրդի մէջ տակաւին կենդանի են ալըպիսի ձեռագրերին մի ժամանակ վերագրուած լարդանքի ու պատուի արձագանգները («Պարաշենց» կոչուած «բժշկարան» ակադարանը) որ անհասկած եկեղեցուց է ներկալ տիրոջ տունը տարուել, չեն վերագարձնում նորից իր տեղը, որովհետև հաւատում են, թէ նա «օղուր» է բերել իւրեանց տունը, ուստի եթէ հանեն նորան տանից, կարող է ալդ «օղուրն» էլ երթալ ակադարանի հետ:

Դ

Նոր-Նախիջևանի ձեռագրերի սկզբից ու վերջին բաց մնացած թերթերի վերալ մենք լաճախ տեսնում ենք նօտրագրով կամ շեղագրով գրուած զանազան ոտանաւորներ, տաղեր, գանձեր, ներբողներ, որոնք ներկայումս մեծ գին ունին մեզ համար, որովհետև, ինչպէս լալտնի է, մեր միջնադարեան բանաստեղծութեան արդիւնքը ղեռ մինչև ցալսօր լիովին չի հաւաքուած, չի գտուած, չի հրատարակուած: Դոցանով, ձեռագրերի ալդ լետով ժամանակի լաւելուածներով կարելի է մի կողմից լրացնել շատ կորած համարուած բանաստեղծական կտորների պակասը, միւս կողմից էլ դոցա միջոցով կարելի է գտել, մաքրել և վերականգնել արդէն իսկ գտնուած ու հրատարակուածների աղաւաղուած տեղերը: Ս. Լուսաւորչի ՌՂԲ (1643) թուին գրուած Շարակնոց և Սաղմոսարան ձեռագրի վերջում, օրինակի համար, գրուած է տղեղ շղագրով հետեւեալ աշխարհաբառախառն գրաբառ ներբողը, որ ժողովրդական բանահիւսութեան բնաւորութիւն ունի.

և միակ երկոտասանի. և լուլիս ամսոյ ի Ժ աւուրն հինգշաբաթի, ձեռամբ անարհեստ խասպէկ գրչի ի հարապետութեան տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի. (ՌՂԴ—1645):

Ս. Նիկողայոսի ամենահին ձեռագիրը մի ակադարան է, որ գրուած է Հայոց ՉԽԲ թուին Ստեփաննոս կաթողիկոսի ժամանակ վարազալ ս. Նշանում:

Անճառին տաճար,
Բռնին հաշտարար
Գերագոյն գտար, Մարիամ,
Գուռն երկնից գողեալ.
Երգէն Սերովբէք,
Զարմանան Բերովբէք,
Երանեալ սուրբ կօլս Մարիամ,
Ընտրեալդ ի Փրկչէն,
Թաղդդ պարծանաց,
Ժառանգ աւետեաց,
Իսկուհի մաքուր Մարիամ,
Լուսին աննըման,
Խորան խընդալի,
Մառ նարընջենի,
Կաքաւ քաղցրախօս Մարիամ,
Հաւիկ սըխալի,
Զայն քո տառարակի,
Ղամբար գիշերի,

Մըթան գիշերի,
Ճրագ լուսատու Մարիամ.
Յեռեալ ընդ ոսկի,
Նարդոս քրքումի,
Շուշան ի դաշտի Մարիամ,
Ոսկի ձուլածուի,
Զի կայ քեզ նըման
Պտուղ ցանկալի,
Զուր մաքուր, լստակ Մարիամ,
Ռահըդ վերին,
Սատաֆ ի ծովին,
Վանիչ մարդարտին,
Տաճար տէրունի Մարիամ,
Վարունուն վերին,
Յօղ դարնանալին,
Քո ճոխ պատկերին,
Ի՛ իւտեալ ոսկով,
Փափաքեալ ցանկամ, Մարիամ:

Այս ոտանաւոր ներբողի տակ² ծանօթաբանած է. «եպիս-
կոպոսին առածն էս թէ հիվ է ալդ եպիսկոպոսը, մենք որոշա-
կի ոյինչ չենք կարող ասել: Մեր միջնադարեան բանաստեղծ-
ների մէջ արդէն իսկ հոգեորականներ շատ կան, մինչև ան-
գամ իսկ ալնպիսի բարձրաստիճան հոգեորականներ, ինչպիսի
էին Ասի կաթողիկոս Յովհաննէս Թըլկուրանցին, Աղթամա-
րայ կաթողիկոս Գրիգորիս Աղթամարցին, Ամդալ առաջնորդ
Մկրտիչ Նաղալը և միւսները: Դա, գուցէ, լինի ալն Յովհան-
նէս եպիսկոպոսը, որ երգել է լալտնի «վասն թռչնոց» երգը՝
«Տէր Յովհաննէս հոգւով տկար...», և ալլն:

Նոյն ձեռագրի մէջ դարձեալ ազեղ շղագրով և, ինչպէս
երևում է, նոյն իսկ վերոյիշեալ ներբողը գրող անձի ձեռքով՝
գրուած է և հետեւեալ վարդի ու սոխակի երգը, որ ամեն բա-
նով արդէն մեր զուտ ժողովրդական միջնադարեան երգերից է:

Առաւօտեան ժամի պահուն
Ահնես զԱձ զուարթուն.
Թուռն փոքրիկես զուարթուն.
Զրուցէ, պուլպուլ, զրուցէ,
Զայնիկդ ի հոգիս դու զրուցէ,
Գիշեր-ցերեկ քուն չունիս,
Ժամ մի երբէք չի հանգչիս,
Վարդին սիրուն կու վառիս.
Զրուցէ... և ալլն:
Վարդն հպարտ է ընութեամբ

Վասն զեղեցիկ տեսութեան.
Ի՛նչ քեզ կու հալի ցնծութեամբ
Զրուցէ...
Կանանչ ու կարմիր կու հագնի,
Ըսպիտակ ու ծիրանի,
Նըման արևու կու փալէ.
Զրուցէ...
Ահա զատիկ մեր հասեալ է,
Սաստիկ ձմեռն անցեալ է,
Վարդին կոկոնն բացեալ է:

Զրուցէ...

Նարդոս զիւր հոռն բուրէ,

Մանուկն գունդդուն է,

Գարնան անտառն կուբերէ.

Զրուցէ...

Այդիքն մեր ծաղկեալ է,

Անուշահոտ բուրեալ է,

Քաղցրահամ պտուղ բերեալ է.

Զրուցէ...

Թզենին տերւն արձակեաց,

Ծիրանի ծաղիկ նըռնենեաց,

Մաքուր տառարակն ձայնեաց

Զրուցէ...

Ողկուղ հաւողն հասեալ է,

Քուրս և սպիտակ կախեալ է,

Կարասն գինով լըցեալ է,

Զրուցէ...

Կարմիր և ըսպիտակ խնձոր է,

Նըման լուսնի կու փայլէ,

Տեսնէ զիս միշտ կու հալէ.

Զրուցէ...

Անտոնիէ զտաւ երգէ,

Մանուկ, անուշ դու ձայնէ,

Եղբայր, բաժակըդ ըմպէ.

Զրուցէ, Պուլպուլ, զրուցէ,

Ձայնիկդ ի հոգիս դու ձայնէ.

Նոյն Ս. Լուսաւորչի ՌձԻԴ (1675) թուին Ղարապետ քաղաքում գրուած խորհրդատետր ձեռագրի սկզբում նոր տղիդ բոլորագրով գրուած է մի ուրիշ վարիանտով «Խաղող զքեզ գովել պիտի» երգը, որ, ինչպէս լատինի է, առաջին անգամ հրատարակուել է 1851 թուին Պալսի «Բանասէր» ամսագրում «Խամկական երգեր» խորագրով: Երգի նախ օրինակը թէև մի շատ տղէտ անձի ձեռքով է գրուած երևում, որովհետև լիքն է տառախալներով ու աղաւաղումներով, արնուամենայնիւ դա իւր անաղարտ կտորներով կարող է հնչողութեամբ ուղղել հրատարակուածի մի քանի սխալներն ու աղաւաղումները:—

Խաղող ըզքեզ գովել պէտքէ,

Որ բոլոր պրտողովդ հաւասար

Զի դու միանս գեղեցիկ

Յամ պըղուն թաճու սալվար:

Թելը քաշած ոսկու մէջէն,

Դու մարգարիտ ոսկի շար,

Քո մէկ պըտուղդ ամէ ճուար

Տըպաղունի ալ ու գուար:

Ազդ մի թուր. ազդ մի սպիտակ,

Ազդ մի կարմիր, որ լուս կուտար,

Ազդ մի դեղին՝ խուճկի նման,

Անուշահոտ մուշ ու ամպեր:

Դու զրախտէն մէջ արմղան

Արարիչէն պարգեւեցար,

Քեղի հրեշտակ երբ Նոյին,

Որ քո պըտուղդ ուրախանար:

Անմահութեան պըտուղ դու ես,

Որ աշխարհիս մէջ բուսար.

Հոտով անուշ, գունով պայծառ,

Մարդ քո սէրուդ ոչ ագնանար:

Ըզքեզ քաղեն, տանին հնձան,

Ճվելու տան քեղի իրար.

Վարդի նըման ջուր կըբըխաս,

Գետի նըման որդոր գընաս:

Տանին քեղի, լընուն կարաս,

Առանց կըրակ կը եռանաս.

Շատ թագաւոր ժողովին վերադ,

Մեծ մեծ իշխանք, աւագ ու

մարագ:

Թագաւորաց սիր բաճաս

Եւ տէր աւետ քաղաքի հաղար:

Թէ նա ունէր հաղար չարկամ,

Կամ խոցիլ սիրտ զիծար,

Յորժամ խըմէ թաս մը լիք

Յամենայն թողու և հաշտալ:

Նախիջևանի նօտագիր ձեռագիր տաղարաններից 'էկն

ալս տաղի վերջին շատ աղաւաղուած և միանգամայն տնմիտ զարձած երկու տունը հետեւեալ կերպով է ուղղուած.—

Ձիադաւորաց սիրտն բանաս Թէ բարկացած լինի մարդոց,
Եւ տէր այնես քաղքի հաղար. Կամի խոցեր զինքն դիժար,
Ի՛նչ նա ունէր հաղար չարկամ Յալնժամ խմէ կաթ մի քննէ,
Նա քո սիրովըդ հաշտեանար. Բաշխէ զամէնն ու հաշտեանար.

Նոյն նօտրագիր տաղարանն ոչ միայն ուղղուած է վերո-
ցիւնեալ խորհրդատետրի մէջ գրուածի վերջին տները, այլ և
աւելացնում է նորա վերալ այլ ես վեց տուն, որ մենք չենք
տեսնում. «Բանասէրում» հրատարակուած «ալդ տաղի սկզբնա-
կան օրինակի մէջ. Աւելորդ չենք համարում դնել ալտեղ
ալդ աւելորդ տները, որոնք ալսպիսով առաջին անգամ հրա-
տարակուելով, կարող են շահեկան լինել թէ մեր ընթերցող-
ների և թէ մեր միջնադարեան բանաստեղծութեան բովան-
դակ արդիւնքը լիակատար հաւաքածուով հրատարակելու
գործով հետաքրքրուողների համար. —

Ընթած խմէ աղքատն ի քէն, Մասխարանալը դէտ դիւահար:
Որ զհացն ու զջուրն կու մուրալը, Ձեռք սուրբ քահանային
Նա լինի տէր աշխարհին՝ Վատարագի ամեն տաճար.
Արարածոցն պարապար, Դու հիւանդաց լինիս բժիշկ,
Գործամ խմէ կուրն ի քէնէ, Մեղաւորաց դու քաւարան
Որ ի մօրէ ծնեալ լիմար, Որ սարկաւարդ բերթաց ասիր,
Հանց հետ քաղաքաց տալ մեկ- Վուն ի գինուն թնչ շահեցար.
նութիւն. Անչափ ունիս հետ սէր գինուն,

Ձէ տեսեր, չունի կապար, Որ գովեցիր սիրովդ լօժար:
Ենթամ խմէ մունճն ի քէնէ, Գիմ ես չունիմ գինուն չարիք,
Որի լեզուն քամոտ լինար, — Եւ բաժակին եմ խղմէթ քար.
Ձերթ զթուխին աղմուսն լե- Յո՛ գրածակն գովեցի,
զուն Որ մեր հոգոցն է յուսարար:

Ս. Լուսաւորչի մի ուրիշ անթուական խորհրդատետր
ձեռագրի սկզբու գրուած է հետեւեալ խրատաբանական ոտա-
նաւորը, որ թէն իւր գրութեան ձևով ու ոտանաւորի արուես-
տով շատ էլ հետաքրքրական չէ, բայց այնուամենայնիւ ար-
ժանի է ուշադրութեան իւր բովանդակութեամբ. —

Ով քահանայ պատարագաւ, Յալս մարդկան պարկեշտ շըր-
Ի՛տ իմացի գլխորհուրդս փըր- չաւդ,
կաւդ. Նա իջանէ հոգով դոժու:

Ոա է հոգոց կենադործաւդ, Ապա ի քեղ Նախն և տես,
Թէն սբ. լինի մատուցող, Որ զքս պատարագես.
Եւ թէ լինի քան զիս խաբաւդ, Եւ է դու մարմնով սբ. Ը՛անա-
Պիղծ և զազիր չարեաց գործաւդ, բառ նս

Եւ ընդ փրկչին համարձակ ես, Յամէն զիմաց զմիտքդ ուղղես,
Առած և մարդ դու միջնորդ ես, Կամ հետ ումքդ ոխ չի պահես,
Ձաթ ընդ մարդկան հաշտեցուս։ Ապա զքս պատարագես։

Ես, Այս քեզ խրատէ, Թէ գիտես,
Թէ դու ունիս արատ ի քեզ, Լաւ իմացիր, խորագորն տես։
Յեկեղեցի չի մտանես, Զայս պատուիրեալ եղէ ես քեզ,
Ոչ ի խորհուրդ մերձիլ իշխես, Ես ամէնուդ ձեր սեներես։
Որ լաւ ամօթ չկրես։ Դարձեալ առ քեզ աղերսեմ ես։
Թէ և լրբիս, պատարագես, — Զարագործիս բարեխօս ես։
Դատաստանիս պատիժ տունես, Զունիմ բերան, որ ասեմ քեզ,
Այլ զխորհուրդս սխալ չասես։ Թէ զմարտիրոս լիշեսցես։

Նախիջևանի Ղրիմում գրած ձեռագրերի լիշատակարան-
ների մեծ մասը նման են միմեանց թէ իւրեանց բովանդա-
կութեամբ և թէ ոճաբանութեամբ ու դարձուածներով։ Երե-
ւում է, որ լիշատակարանների հեղինակներն ուղղակի ար-
տագրել են միմեանցից, աւելացնելով միայն իւրեանց անուան
ու ազգատոհմի լիշատակութիւնը և տեղ տեղ փոխելով լեզուն,
ոճերն ու դարձուածները։ Կան և ոտանաւոր լիշատակարան-
ներ։ Եւստի պատահում է հետեւեալ շատ ընդունուած ոտանա-
ւոր լիշատակարանի օրինակը։ —

Ձեռս երթալ, գիրս մնալ,
Տկար մարմինս ի հող դառնալ.
Տէրն ողորմի ինձ և նորա,
Եւ լամենայն զարմից սորա։¹³⁾

¹³⁾ Այս լիշատակարանի մի ուրիշ վարիանտն էլ այս-
պէս է.

Ձեռս երթալ, գիրս մնալ,
Տկար մարմինս ի հող դառնալ.
Տէրն ողորմի ինձ և նորա,
Զսուրբ աւետարանս կարդալ.
Եւ զմեզ ի բարին լիշենալ.

Մի տեղ էլ այս լիշատակարանը ընդարձակած է հետե-
ւեալ կերպով.

Ձեռս երթալ, գիրս մնալ,
Տկար մարմինս ի հող դառնալ.
Տէրն ողորմի մեզ և նորա.
Որ սուրբ աւետարանս կարդալ,
Վերոգրեալքս լիշատակաւ.
Եւ ցորդութեամբ գրիչս լիշենալ.
Եւ զուք լիշք մարանաթալ,
Զի կուք օրհնեալք լսել տալ, (?)
Այն որ օրհնեալ է լարակալ.

Ներկայումս Նոր-Նախիջևանի ձեռագրերի ընդհանուր թիւը, համարելով ս. Լուսաւորչի մատենադարանում, քաղաքի միւս եկեղեցիներում, գիւղերի եկեղեցիներում և ս. Իսաւրեանքում գտնուածները, հասնում է 325-ի: Ձեռագրերից ամենահինը համարուում է ս. Լուսաւորչի աւետարաններից մէկը, որ գրուած է Հայոց ՈԿԳ (1212) թուին, իսկ ամենանորը — նոյն ս. Լուսաւորչի «Դաւթար»-ը, որ գրուած է մասամբ իւր Յովսէփ եպիսկոպոս Արղութեանի ձեռքով, մասամբ էլ նորա հրամանով Հայոց ՌՄԻԹ (1780) թուին Նոր-Նախիջևանում: Ձեռագրերի թուի շատութեամբ առաջին տեղը բռնում է քաղաքի ս. Լուսաւորչի մալր-եկեղեցին, երկրորդը — ս. Նիկողայոսը, երրորդը — ս. Թորոսը, չորրորդը — ս. Աստուածածինը և յետոյ միւսները կարգով: Արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ գիւղերի եկեղեցիներում շատ քիչ ձեռագիր է պահպանուել: Դորա պատճառը պէտք է համարել կամ այն, որ հէնց սկզբից էլ գիւղերի եկեղեցիներում շատ քիչ ձեռագիր է եղել և կամ, որ աւելի հաւանական է, այն, որ գիւղերում ձեռագրերը աւելի անխնամք են պահուել, քան թէ քաղաքում: Յայտնի է, որ առաջ գիւղերի եկեղեցիներին պատկանած շատ ձեռագրեր այժմ գտնուում են մասնաւոր մարդկանց, գլխաւորապէս քահանաների ու նոցա ժառանգների ձեռքին: Եւստի է նոյնպէս, որ «Քելլէշահիննց» կոչուած Նախիջևանի ամենանշանաւոր ձեռագիրը — Յայսմաւուրքը, որի լիւստակարանի մէջ գրուած է Ղրիմի գաղթականութեան պատմութիւնը, առաջ պատկանել է Նիսուրթալ գիւղի ս. Կարապետ եկեղեցուն:

Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի առաջնորդութեան տեղապահ հանգուցեալ Կաբրիէլ եպիսկոպոս Արլաղեանն իբր թէ կամենալով վտանգից ազատել այդ թանկագին մագաղաթը, հրամայել է 1858 առին ս. Կարապետից տեղափոխեն նորան քաղաքի ս. Լուսաւորչի, որտեղից և, չգիտենք, երբ և ինչպէս այդ Յայսմաւուրքն ընկել է իւր այժմուայ տէրերի՝ Քելլէշահիննց ձեռքը: Մենք քանիցս առիթ ենք ունեցել այդ ձեռագրի առթիւ տեսնուել և խօսել պ. Յովհաննէս Քելլէշահինեանի հետ և լորդորել նորան վերադարձնելու ձեռագիրը կամ իւր նախկին տեղը — ս. Լուսաւորչի պահարանը և կամ ուղարկելու նորան ս. Էջմիածնի մատենադարանը, հասկացնելով նորան, նախ, դորա կարևորութիւնը Ղրիմի գաղ-

թականութեան համար ընդհանրապէս և Նախիջևանի գաղթականութեան համար մասնաւորապէս, երկրորդ, նորա եկեղեցուն պատկանելու հանգամանքը և, երրորդ, ալդալիսի մի թանկագին բանի մասնաւոր տան մէջ պահելու անյարմարութիւնը և զորանից առաջ գալիք վտանգը: Բայց չենք կարողացել համոզել նորան: Պարոնը, իւր ասելով, միտք ունի մի օր ուխտ գնալու ս. Էջմիածին. այն ժամանակ նա իւր հետ պէտք է տանէ և ալդ ձեռագիրը և նուիրէ վեհափառին ս. Էջմիածնի մատենադարանի համար: Բարի մտադրութիւն է, ի հարկէ, եթէ շուտ կատարուի. բայց մենք վախենում ենք, որ մինչև ալդ օրը հասնի, շատ քիչ անցնի մէջտեղը և ձեռագիրը մի ուր և է վտանգի ենթարկուի: Արդեօք մտածել է պարոնը, թէ ինչ մեծ բարոյական պատասխանատուութիւն է առնում իւր վերալ, իւր մօտ պահելով և ալդալիսով կորստեան վտանգին ենթարկելով մի լիշատակարան, որ միակ պատմական վաւերականն է Ղրիմի Հայոց մեծ գաղթականութեան:

Ալդ Յայսմաւուրքը գրուած է մագաղաթի վերալ Հայոց ՌՃԼԹ (1690) թուին և լիշատակ է մի ոմն տիրացու Աւետիքի, ինչպէս ալդ կարելի է տեսնել նորա համառօտ լիշատակարանից. «Յիշատակ է գիրքս տիրացու Աւետիքին լեկեղեցի Աստուածածնի, որ կոչի Յայսմաւուրք. զոր կարգեալ է ի լեւորին ժամանակս վարդապետն Գրիգոր Ծերենց կոչեցեալ, Գըրեցաւ սա լամի Հայոց ՌՃԼԹ, և Տեառն լամի ՌՌՂԴ, ի կաթողիկոսութեան Տեառն Նղիադարու, լառաջնորդութեան հիւսիսալին երկրիս, որ է Ղուիմ, Վարդանալ արքեպիսկոպոսի և Յակոբ վարդապետի քաջ բաբունապետի»:

Ղրիմի և Նախիջևանի Հայերի Շիրակի Անուց գաղթելու և Ղրիմ հասնելու պատմութիւնը գրուած է ս. Սարգիս զօրավարի վկայաբանութիւնից լետու. Դա մի ընդարձակ լիշատակարան է, որ առաջին անգամ տպագրուել է Բժշկեանի ճանապարհորդութեան գրքում, երկրորդ անգամ «Ծիածան» ամսագրում: ¹⁴⁾

¹⁴⁾ Քսէլէշահինենց Յայսմաւուրքի Անուց գաղթականութեան վերաբերեալ լիշատակարանն անմիջապէս մէջ է բերուած և Նիստութալի Վարդան-գրքի մէջ: Ալդ Վարդան-գիրքն այժմ մեզ է պատկանում: Իսկ մի օրինակն էլ եղել է հալոյ Բուշնարեանի ձեռքին: (Տես «Պատմութիւն գաղթականութեան իրիմու հայոց» գլուխ ԺԱ, էջ 127»)

Թէ Նախիջևանի վերուիշխաւ ըլլոր ձեռագրերն քնշ տեսակներից են բաղկացած և իւրաքանչիւր եկեղեցում քնշ քանակութեամբ են գտնուում,—ալդ կարելի է տեսնել հետեւեալ ընդհանուր աղիւսակից։—

Ձեռագրերի տեսակները

Ձեռագրերի տեղերը

	Լուս.	Նիկ.	Թորոս	Աժած.	Համբ.	Գէրգ.	Խաչ.	Զալբըր.	Նեստուխ.	Սալա.
	Ս.	Ս.	Ս.	Ս.	Ս.	Ս.	Ս.	Ս.	Ս.	Ս.
Աւետարան	62	9	5	7	5	5	—	1	1	1
Յալմաւուրք	33	1	2	2	3	2	1	1	—	—
Մաշտոց	33	—	2	—	—	—	—	—	—	—
Ճաշոց	25	1	—	—	—	—	—	—	—	—
Հարական	28	—	2	1	—	—	—	—	—	—
Խորհրդատետր	20	3	1	—	—	—	—	—	—	—
Սաղմոսարան	20	—	1	—	—	—	—	—	—	—
Գանձարան	12	1	—	—	1	—	1	—	—	—
Ժամագիրք	3	1	—	—	—	—	¹⁵⁾	—	—	—
Տօնացոյց	7	—	¹⁶⁾	—	—	—	—	—	—	—
Սաղմոսարան և Գանձարան	1	—	—	—	—	—	—	—	—	—
Ժամագիրք և Սաղմոս	1	—	—	—	—	—	—	—	—	—
Խաղիւրք	2	—	—	—	—	—	—	—	—	—
Հարակնոց և Սաղմոս	1	—	—	—	—	—	—	—	—	—
Գանձարան և Քարոզք	1	—	—	—	—	—	—	—	—	—
Գանձարան և Տաղարան	1	—	—	—	—	—	—	—	—	—
Ճառընտիր	1	—	—	—	—	—	—	—	—	—
Սարգիս Ենորհալի	2	—	—	—	—	—	—	—	—	—
Դիրք Տղալութեան Յիսուսի	1	—	—	—	—	—	—	—	—	—
Վարդանգիրք	1	—	—	—	—	—	—	—	—	—
Ժողովածու	2	—	—	—	—	—	1	—	—	—
Քաջանալաթաղ	1	—	—	—	—	—	—	—	—	—
Դաւթար	1	—	—	—	—	—	—	—	—	—
Աստուածաշունչ (պակաս.)	—	—	—	—	—	—	1	—	—	—
Դիրք խրատուց	1	—	—	—	—	—	—	—	—	—

260 16 14 10 9 7 5 2 1 1

Բացի ալդ ընդհանուր ցուցակում նշանակուած ձեռագրերը

¹⁵⁾ Ս. Խաչ վանքի «Ժամագիրք» ձեռագիրը լոկ ժամագիրք չէ, այլ «Ժամագիրք և պարզատումար» մի կազմի մէջ։

¹⁶⁾ Ս. Թորոսի Տօնացոյցը լոկ Տօնացոյց չէ, այլ «Տօնացոյց և ժամագիրք» մի կազմի մէջ։

գրերից, որոնք գտնուում են եկեղեցիներում և կազմում են ընդհանրության սեփականություն, Նախընտրված կան բաւականին թուով ձեռագրեր և մասնաւոր մարդկանց ձեռքում: Այդ մասնաւոր մարդկանց սեփականություն համարուած ձեռագրերի մեծ մասը, ինչպէս արդէն առաջին գլուխներից մէկում ակնարկեցինք, առաջ դարձեալ եկեղեցիներին են պատկանել և լետով միայն ժամանակի ընթացքում անցել են սորա նորա ձեռքը և մասնաւոր սեփականություն են դարձել: Ի՞նչոք մասն էլ դեռ Ղրիմում մասնաւոր սեփականություն են եղել և դաղթականութեան ժամանակ բերուել են Նախընտրված և որդէցորդի ժառանգաբար հասել են իւրեանց ներկայ տէրերի ձեռքը:

Մասնաւոր ձեռագրերից մեզ յատկապէս յայտնի են՝ վերոլինշալ Օդաբաշենց աւետարանը և Քիլէշահինենց Յայտաւորքը, Գանձապետեան Տէր-Մկրտիչ քահանայի Սարգիս Շնորհալին (գրուած Ղրիմում ՊԵ թ.) և Ամիրտովլաթ Ամասիացւոյ «Անգիտաց անպէտ» կոչուած բժշկարանը¹⁷⁾, օր.

¹⁷⁾ Ուս ձեռագիրը յայտնի Ամիրտովլաթ Ամասիացւոյ «Անգիտաց անպէտ» կոչուած բժշկարանի ոչ ընտիր օրինակներից մէկն է: Դա գրուած է տգեղ նօտագրով և շեղագրով կոկած բարակ թղթի վերայ, ունի 621 թուղթ և ամիսփուլած է կաշեպատ փայտի կազմի մէջ, «Դեղօրէից կերպն ու պատրաստութիւնը» գլուխը, որ ձեռագրի ամենաընդարձակ մասն է, իւր սկզբում ունի Ամիրտովլաթի յայտնի իրատակարարանը: «Հիւանդութիւնները և նոցա բժշկութիւնը» գլուխը, որ զբոլուած է ալբուրենական կարգով, բաղկացած է երկու մասից՝ հին, Ամիրտովլաթի գրածից և նոր, ուրիշների ձեռքով եղած լաւելուածից: Յաւելուած կալ և «Բառարան բժշկութեան» գլխի վերջում: Թէև նոր իշատակարարաններ չատ կան գրուած, բայց դոցա մէջ չկալ ոչ մէկը, որ իւր, ձեռագիրն արտագրողինը լինէր և որից մենք կարողանալինք իմանալ, թէ այդ ձեռագիրն ո՞վ է արտագրել, որտեղ և երբ: Նոր իշատակարարանները գրուած են ձեռագրի սկզբում, միջում և վերջում տգեղ շեղագրով անգրագէտ մարդկանց ձեռքով, որոնք գործ են ածել բժշկարանը և իւրեանց տպաւորութիւնն են յայտնել: Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել այդ տպաւորութիւններից մի երկուսը, որոնք հետաքրքրական են:

«1830-ին. Շատ մարդու հիւանդին շատ հեղինակներն կը մեռնին սասածներն ես նախեցալ ամէնն ալ աղէկ եղան Աստուծով կարապետ Լօխմանեան»: «1881-ին. Աս հեղինակարանս կարդացի օրն Ժ անգամ լաւն կանէի վատ բանին գրան էր

Մարիամ Տէր-Գրիգորեանի Շարականը ¹⁸⁾, մեր սեփական Վարդանազիրքը և Տաղարանը, նախկին Հակական Մագիստ-

նայելի ալսկից շատ բան կը իմանալի քանի կարգալ միտքը կը բացուի անպէս իմանաւ Աստուծով եւ Լօխմանովս հասու եղաւ այս բանիս ինչ որ մէկ բանն տեղակ չեղաւ վաղ չէր գալի ամէն մէկ բանն բերանք եղաւ ամէն մէկ ճարն հարցնուր նէ խրատ կու տալի ամէն մարդ շնորհակալ կ'լալին կամ ողորմիս կ'ասէին ծնողացս:

«Այս բժշկարանս ձ տարի ապրող մեռնող չըվտէրնէստէ անունով հէքիմին գիրերուն մէջէն գտնվիլ է մեռնելուն էտեւ: Այս գաղտուկ հէքիմարանս իւրեան սագէրուն ձ տարիներով պահել էր, որ սորայ պասլըն ապրել է ձԼ տարի, մայրն ձէ տարի և հալըն ձժԲ տարի ամէն օր բանցնելով ասոր մէջի ճարը որ զրված է պարտէ ամէն առաւօտ իրկուն Ը կամ Թ կաթիլք կարմիր գինիի կամ չալի կամ խորոված միսի ջուրի մէջ կ'աթեցնելով խրմելու: Այս լառաջարանից լետով գրուած է. «Իեղ երկարութեան կենացս անունով ճարի մասերը—«էղաները» և պատրաստութեան ձեռը: Այս լիշատակարանը և դեղի պատրաստութիւնը զրել է մի ոմն Տէր Մարտիրոս — ստէր Մարտիրոսի ձեռամբ է գրեցեալ թվին ՌՄՄԵ ով ոք կարգալ մեղ լիչէ»:

Ձեռագիր բժշկարանիս կողքին գրուած է և Ղրիմի ս. Խաչ վանքի գմբէթի երկաթագիր ոտանաւորը.—

Փառաց տաճարս Աստուածալին,
Երկրորդ դըրախտ կենաց փալտին,
Որ է պատկեր երկնից վերին,
Եւ եռյանձնեանն կալեանին.
Ի ծընընդենէ մարմնոյ Փրկչին՝
Իրեք հարիւր և հազար ամին
Ութ և լիսուն ըսկսեալ լամին,
Կանգնեալ լանուն սուրբ Նշանին.
Ստատութեամբ իւր ծառալին՝
Յօհաննիսի կըրոնաւորին
Եւ հարազատ եղբարց նորին
Եւ ըստ հոգոյ որդոց բնաւին:

¹⁸⁾ Օրիորդ Մարիամ Տէր-Գրիգորեանի Շարականը մի մագաղաթ փոքրագիր կաշեպատ փալտէ կազմով մանր, գեղեցիկ բոլորագրով գրուած ընտիր ձեռագիր է, որ գրուած է Օշին Թաղաւորի ժամանակ Հալոց Չկէ—(1318) թուին գալու անապատում Վրդգիւ կոչուած ընտիր օրինակից: Աւելորդ չենք համարում մէջ բերել այստեղ այդ Շարականի ամբողջ լիշատակարանը. «Փառք սուրբ երրորդութեան և միաստուածութեան ամէն: Գրեցաւ եղանակաւոր փառս ի թու» հալոց Չկէ ի Թաղաւորութեանս հալոց աւչնի աստուածասիրի և

քառի «Կատաստանագիրքը»¹⁹⁾, տեղիս թեմական դպրանոցի «Անտառ նորագոյն մատնանցը»²⁰⁾, և ալ ևս մի քանի մանր-մունք բաներ, ինչպէս, օրինակի համար, Տօնացոյց, Ոսկեփո-րիկ, Համալիւ և այլն:

Քարեպաշտի, որդւոյ արքայիս Լեոնի. Եւ ի հալլապետութեան տեառն Կոստանդեա Կիսարացոյ. ի յանապատս որ կոչի գալու՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և ալլոց սրբոցս որք աստ, ձեռամբ մեղապարտ և անարժան քա՛ն Սիմէոնի. ի խնդրոյ պատուական և հոգևոր եղբար մերոյ՝ Ստեփանոսի դայրի. Արդ աղաչեմ զամենեսեան որք ազաւթ ի սմանէ, լի-չեսջիք զստացաւդ տառիս զպատուական պատանին զստեփա-նոս դպիրն և զծնաւդս իւր որ ստացաւ զսա ի վալելումն ան-ձին իւրոյ և ի լիչատակ հոգւոյ իւրոյ և ծնաւդաց իւրոց մաւր իւրոյ պիաղործին և հաւր իւրոյ մարտիրոսին հանգուցելոյն ի Քրիստոս, որոյ ողորմեսցի Տէր Յիսուս Քրիստոս. ամէն. Ընդ նմին աղաչեմ լիչել զանալիտան դրիչս զՍիմէոն և զծնաւդս իմ և խոշորութիւն գրիս՝ և սխալանացն որ ի սմա հանդիպի անմեղադիր լերուք աղաչեմ. Եւ Աստուած լիչողացդ և լիչե-լոցս առ հասարակ ողորմեսցի ի միւսամզամ զալստանն իւրոյ. և նմա փառք լաւտեանս ամէն. Բալց գրեցաւ սա ի լաւ և լընտիր աւրինակէ զոր ալժմ խըլգի կոչենա՛:

«Ո՛հ զմեղաւոր հոգս զսարգիս սուտանուն ք՛» զոսկաւդ տառիս և զծն՛. իմ աղաչեմ լիչել ի տէր.:

¹⁹⁾ Այդ դատաստանագիրքը ներկայումս պահուում է Նոր Նախիջևանի քաղաքային վարչութեան գիւղանում. Դորա մա-սիւ տես մեր «Նոր-Նախիջևանցւոց Կալսերաշնորհ հրովար-տակը և նոցա Դատաստանագիրքը» լռողւածը. «Լուսմալ» թիւ 1902, գիրք 1.

²⁰⁾ Կաշեպատ փայտէ կաղմով նորը, բարակ թղթի վե-լրալ երկսիւն նօտրադրով, կարմրադեղ գլխադրերով և ունի-տորական լեզուով գրուած մի մեծագիր ձեռագիր է դա. Դո-րա լիակատար խորագիրն է. «Անտառ նորագոյն մտածմանց հիմնեալ ի հեղինակութեան սրբոյ եկեղեցւոյ. Յարմարեցուցա-նելի ամենից լուր աւուրցն քառասնորդաց, կիւրակէից, բո-լոր տարոյն, և հասարակ տօնիցն սրբոց. ի գերլարգելի. Տեա-ռըն Աղէքսանդր գալամաթլ կոչեցելոյ. մեսինացւոյ ի փա-տուալ»:

Թարգմանեցեալ լիտալիանէ լեզուէ. ի հալկական բար-քառ ի Ղուկասու վարդապետէ խարբերթացւոյ լԱմի տեառն 1741: Ըստ խնդրոյ Արհի և պանծալի եպիսկոպոսին տեառն Յովհաննու պատրիարքին Կոստանդնուպօլսոյ, հանգուցելոյն առ Քրիստոս. ի Կոստանդնուպօլիս քաղաքի արքայականի. — Ըստ հալոց թվաբանութեան ՌՃՂ. ինն:

Ե

Եկեղեցիների ձեռագրերից արժանի են առանձին ուշադրութեան՝ Ս. Լուսաուրչի Կիլիկեան երեք աւետարանը, Սաղմոսներից մէկը, դիրք կամ աւետարան տղայութեան Յիսուսի և Ս. Աստուածածնի աւետարաններից մէկը, Կարօտ են մանրամասն հետազոտութեան ու ուսումնասիրութեան Ս. Լուսաուրչի ճառքները, որ գրուած է հայոց ՊՔ (1353) թուին. Սարգիս Շնորհալու երկու օրինակ մեկնութիւնը, որոնցից առաջինը գրուած է Հայոց Պիղ (1376) թ., երկրորդը՝ Պիլ (1398) թուին. Վարդան-գիրքը, որ գրուած է հայոց ՁԼ (1341) թուին և մօտաւորապէս ԺՁ և ԺԷ դարերում գրուած երկու ժողովածուն:

Առաջին Կիլիկեան աւետարանը, որ երկու անգամ արժաթապատ է անել տրուած—առաջին անգամ հին ժամանակները մի ոմն Սինանի ձեռքով, որ մի բարեպաշտ մարդ է եղել և իւր ծախքով արծաթեալ զարդերով զարդարել է տուել ձեռագրի կազմը, երկրորդ անգամ նոր ժամանակները մի ոմն Յովհաննէսի որդի բփշկ Պետրոսի ձեռքով Մոսկուայում—սկզբից պատկանել է Սսի Թագաւորական մատենադարանին. Ալգտեղից դա առաջ տարուել է Սեբաստիա, լետոյ Ղըրմի Կաթաքաղաքը և, վերջապէս, Նոր-Նախիջևան. Թագաւորական աւետարանի այդպէս երկրից երկիր, քաղաքից քաղաք Թափառելու պատճառն եղել է, ինչպէս երևում է չիտակարանից հետեւեալ հանդամանքը. Ո՛ր սեբաստացի Ստեփան անունով եպիսկոպոս կամենալով երկրպագութիւն անել Ս. Լուսաուրչի աջին, Հայոց ՎՍուրբ դիտապետի օրհնութիւնն առնել և ողջունել Հայոց Կիլիկիոյ Թագաւորին, գալիս է Կիլիկեա Ոչին Թագաւորի և Կոստանդին կաթողիկոսի ժամանակ. Թագաւորը սիրալիբ ընդունելութիւն ցոյց տալով եպիսկոպոսին, կամենում է նորան մի թանկագին ընծալ տալ, բայց նա մարմնաւոր զանձն առ ոչինչ է համարում և ըղձանում է միայն կենաց քարոզին», այսինքն աւետարանին. Այն ժամանակ Ոչինի հրամանով նորա առաջ բացւում է արքունի մատենադարանը և առաջարկւում է նորան ընտրել իւր համար այնտեղ գտնուած բազմաթիւ աւետարաններից որը ցանկանաւ. Նա էլ մտնելով «լարկեղս տանն ուր հաւաքեալ կային սուրբ կտակարանքն», ընտրում է բոլորի միջից այդ աւետարանը, որովհետեւ շատ է հաւանում դորա՝ արագ և զեղեցկագիր գրչին:

և բազմերանգ ծաղկաւք զարդարեալ լողնալանճար նկարա-
կերտին»։

Այդ աւետարանը գրել է Աւետիս գրիչը, բայց թէ երբ,—
չալտնի չէ, որովհետեւ դորա գրութեալ թուականը չի նշանա-
կուած։ Լարելի է միայն շատ հաւանականօրէն ասել, որ Ստե-
փաննոս եպիսկոպոսի ձեռքն անցնելու ժամանակ դա դեռ նոր
է գրուած եղել, որովհետեւ նորա զարդերն ու պատկերները
դեռ բոլորովին վերջացած չեն եղել, ալ միայն ի տն տնօ-
րինականացն բաժին մը նկարեալ էին և զկէսն նշանադժեալ
և զլոյտիս թողեալ զտեղի։ Առ հասարակ մեծ հաւանականո-
թեամբ կարելի է ասիլ, որ այդ աւետարանը գրուած է մօ-
տաւորապէս 1319—20 թուականներին։ Որ դորա գրութիւնն
այդ թուականներէց առաջ կալ լիտով չի կարող լինել—, ալք
երևում է և այն հանգամանքից, որ Ստեփաննոս եպիսկոպոսը
կամենալով լրացնել ձեռագրի պատկերներէն և նկարներէ թե-
րի մնացած անդերը, որոնում գտնում է մի Սարգիս անունով
և Պրծակ մականունով քահանայ և լանձնում է նորան ալք
գործը, խոստանալով աշխատանքի վարձ հատուցանել քահա-
նային Ռ և Յ գրամ։ Սարգիսն էլ, որ շատ հմուտ է լինում
«նկարապրութեան» արուեստին, մեծ սիրով ձեռնարկում է
գործին և մեծ աշխատանքով լրացնում է «տակնկար» պատ-
կերներէ պակասը նոյն Օշին թագաւորի և Աստուանդի Բ պրօ-
նագործ կաթողիկոսի ժամանակ հալոց ԶԹԿ (1320) թուին ²¹⁾։

²¹⁾ Իւր պատկերներէ գեղեցիկութեամբ ու նկարներէ նըր-
բութեամբ աչքի ընկնելու բան է և «Յովսէփեան» կոչուած
մեծադիր աւետարանը, որ նոյնպէս կիրիկիալումն է գրուած
երևում։ Յովսէփեան աւետարանը, որ ինքն երջանկալիչատակ
արհին իւր ևս սկզական ծախքով արծաթապատ է անել տուել
և նուիրել Սի դուռն Նօխիջեանու Ե. Լուսաւորիչ աւագ եկե-
ղեցւոյն, գրուած է մագաղաթի վերայ մաքուր բոլորագործի
Դորա հաստ արծաթապատը ձուլածով է և ունի երկու երեսի
վերայ ուղղակի պատկերներ։ Առաջին երեսի վերայ՝ անկիւն-
ներում ձևացած են աւետարանիչների պատկերները, իսկ
մէջտեղը— Ի աշելութիւնը։ Երկրորդ երեսի վերայ՝ մէջտեղը
ձևացած է Աստուածամօր պատկերը՝ Յիսուս մանուկը՝ դը-
կին, անկիւններում— աւետման, ընծայման, մկրտութեան
և մոգերի երկրորդութեան պատկերները, ևս պատկերներ ար-
ծաթեալ կազմի և լաւ բերանակալի վերայ, ուրեց բովան-
դակութիւնը առնուած է Գրիստոսի չարչարանքի տեսարան

Արժանի են առանձին ուշադրութեան այդ աւետարանի պատկերները, Դորա լուսանցքներն էլ, ինչպէս Նախիջևանի

ներից: Ամբողջ ձեռագիրը պարունակում է իւր մէջ հաստ ընտիր յագագածի 337 թուղթ, որոնցից 316 թուղթը բռնում է աւետարանի բնագիրը, իսկ մնացեալ 16 թուղթը— լիշատակարանները, համաբարբառը և լիշատակարանների համար գրքի սկզբից ու վերջից բաց թողած թղթերը: Համաբարբառը, որ գրուած է կամարակապ զարդերի մէջ, սկսում է «Ամոլնի աղեկսանդրացւոր սովորակէն խօսքերով և վերջանում է «Աղջ լեր, Զա՛ւ վդ չի՛շ» բառերով: Համաբարբառի երկու առաջին երեսների կամարակապ զարդերի ճակատին նկարուած է երկու մարդու պատկեր, որոնցից առաջին երեսի վերայ նկարուածը մի ձեռքին բռնած է կիսաբաց ուլորած թուղթ, իսկ միւս ձեռքը բարձրաց ած է օրհնութիւն տալու ձևով: Երկրորդ երեսի վերայ նկարուածը մէկ ձեռքին զիրք է բռնած, միւս ձեռքն առաջին նման բարձրացրած է օրհնութիւն տալու ձևով: Առաջին պատկերի մօտ գրուած է. «Եւսեբիէ», երկրորդի մօտ— «Կարպիոսէ»:

Աւետարանի երկէջ է և ունի ծաղիկաւ և ոսկեղօծ դրվագներ և հայկական ձեռագրերին լատուկ զարդեր լուսանցքների վերայ՝ ծաղիկներ, խաչեր, կաթուղիկէներ, օձեր, ծառեր, թռչուններ, հրեշտակներ և աւետարանի բովանդակութիւնից առած զանազան գործող անձանց պատկերներ՝ Տիրամօր, Առաքեալների, Սողոմոնի, Յուդասի, և այլն և այլն: Իւրաքանչիւր աւետարան ունի նախադրութիւն և զլիակարգութիւն, իսկ Մատթէոսի, Ղուկասու և Յովհաննու աւետարաններն ունին իւրեանց նախադրութիւնից և զլիակարգութիւնից լետով և այդ աւետարանիչների մեծագիր պատկերները: Զեռագրի գրութեան ձևից պարզ երևում է, որ Մատթէոսի և Մարկոսի աւետարանները գրուած են մէկ մարդու ձեռքով, իսկ Ղուկասինն ու Յովհաննունը—մի ուրիշի: Ղուկասի աւետարանի վերջում գրուած համառօտ լիշատակարանից մենք իմանում ենք, որ առաջին մասի գրողն է Առաք վարդապետը, երկրորդինը—Սարգիս Երէցը և որ այդ ձեռագիրը գրուած, վերջացած է Հայոց ՊԱ (1352) թուին: — «Ո՛վ զմեղաւոր հոգս զալա՛ վդ՛՝ անարժանս: զոսկաւդ և զծաղիկաւ սուրբ աւետա՛, ինչ՛՝ աղաչե՛: Նայե զանարժանս Սարգիս երէց՛՝ որ բազում աշխատութեամբ ի դառն ժամանակիս որ էր թիւս հայոց ՊԱ. կատարեցի զսա իմով անձամբ և ձեռաւք ի խնդրով մեծ հռետոր բաբունդն ալաք կոչեցեալ. որ ինք մեծ բաբունին գրեալ էր զաւետարանս զայս մինչև ի Ղուկասու վանց որ ալ մագաղաթ չկայր նա մնացել էր կլակատար. նա վասն լոյժ սիրոյն Քրիստոսի կուշանայր որ ի դուխ ելանէր. նա կատարեց Աստուած զիւր

միւս պատկերազարդ աւետարաններինը, զարդարուած են ծաղիկների, ծառերի, թռչունների, օձերի, խաչերի և կաթուղիկէների նկարներով, բայց դորա զարդերը, նախ, աւելի նուրբ ու դեղեցիկ են, քանթէ միւսներինը, երկրորդ, դա, բացի իւր լուսանցքների նկարներից և աւետարանիչների մեծադիր պատկերներից, ունի և բազմաթիւ ընտիր, նուրբ ճաշակով յօրինուած աւետարանների համարեմ իւրաքանչիւր գլխի բովանդակութեան համապատասխանող մանր պատկերներ, Ստեփաննոս եպիսկոպոսի սրտին անքան մօտիկ, անքան սիրելի ալդ «կենաց քարոզը» բերուել է Ղրիմ իւր իսկ եպիսկոպոսի ձեռքով, որ խոյս տալով ալլազգիների հալածանքներից, եկել է Վաֆա քաղաքը և երկար ժամանակ աշնտեղ ապրելուց լետու, թողել է նորան լիշատակ քաղաքի բազմաթիւ եկեղեցիներից մէկում, պատուիրելով չձախել, գրաւական չդնել և չհանել եկեղեցուց, չսեփականացնել, Վիլիկեան երկրորդ աւետարանը նույնպէս արծաթապատ է. նա դրուած է մագաղաթի վերայ մանր, գեղեցիկ բոլորագրով և ունի սովորական զարդադրերը և ոսկեալ տառերը և բազմաթիւ մանրանկարներ լուսանցքների վերայ: Ալդ աւետարանը գրել է Ստեփաննոս գրիչը Սմբատ թագաւորի և Գրիգոր կաթուղիկոսի ժամանակ հալոց 988 (1297) թուին և ոսկով զարդարել է Գրիգոր քահանայն: Դա պատկանել է Լեւոն թագաւորի «ղունապան» Սիր Սիրուն իշխանին, որ ընծայել է դորան «Անհամբեր» կոչուած սուրբ Աստուածածնի տաճարին «ի լատանայ խէչ խրտնվուն», որ նա ինքն իւր ծախքով վերանորոգել էր ²²⁾:

Հալիբի Ալթուն Պուղա Նալիրի դէպի Վիլիկիա կատա-

խնդիրքն ու պատրաստեց զանաւթն գրոցս որ կատարեցաւ ի փառ Աստուծոյ ամէն:

Յովհաննու աւետարանի վերջում անմիջապէս ինչպէս նորա շարունակութիւնը նույն ձեռքով ու ոսկած գլխագրով դրուած է հետեւեալը.—

Իսկ Յովհաննէս արծուանման
Թըռեաւ մըտաւք անհասական,
Աւ ի պատմել որդւոց մարդկան
Ջանճառ էիցս հանրական:

²²⁾ Հալր Մինաս Բժշկեանը մէջ է բերում իւր ճանապարհորդութեան գրքի մէջ այս աւետարանի լիշատակարանի միայն համառօտ բովանդակութիւնը:

րած արշաւանքի ժամանակ, երբ աւերուել, քանդուել ու աւարի է մատնուել ամբողջ Կիլիկիան, կողոպտուել է և Աղանալի վերոյիշեալ Ս. Աստուածածին կնիզեցին և ալդ աւետարանը միւս սրբազան անօթների հետ միասին ընկել է անօրէնների ձեռքը և տարուել է Հալէք, որտեղ գտել է նորան պարոն Պետրոս խնդրեց իշխանը, որ դեսպան է ուղարկուած եղել ամիրաների մօտ, և դնել, բերել է Կիլիկիա, Վասիլ իշխանը, որ թագաւորի «թղթագիրն» է եղել, հատուցանելով Պետրոս իշխանին աւետարանի աղատելէքը, վերստին տարել, դրել է նորան իւր առաջուայ տեղը—Ս. Աստուածածին, Վերին աստիճանի հետաքրքրական է ալդ ձեռագրի լիշատակարանը, որի մէջ պատմուած է վերոյիշեալ Ալթուն Պուղալի և աւետարանի գերի տարուելու մանրամասն պատմութիւնը։ Դա, ալդ լիշատակարանը հետաքրքրական է ոչ թէ միայն իւր պատմական բովանդակութեամբ, որ մեծ դին ունի մեր պատմութեան համար, այլ և իւր լեզուով, որ Կիլիկիայում ալն ժամանակները գործածուած հալոց լեզուի մի կատարեալ օրինակը կարող է համարուել, չենք ասում արդէն ալն, որ դորանից մենք իմանում ենք, թէ Կիլիկիոյ հալ թագաւորները դրանք գոյութիւն են ունեցել «դեսպան» և «թղթագիր» կոչուած պաշտօնեաներ։

«Արդ լետ կատարելով դսուրք աւետարանս, գրեալ է ալդ նշանաւոր լիշատակարանում, ամենայն օրհնութեանց արժանիքն դորս լիշեալ են լիւրիսնց լիշատակարանս, անկեալ էր սուրբ աւետարանս ի հանդուցեալ հոգին ի Սիր Սիրունն որ էր դռնապան արքային հալոց Լեոնի. և նա շնորհեալ էր դաւ սուրբ տաճարին աստուածածին գոր ինքն վերստին էր շինեալ ի լատանալ խէչ խտնոլուն որ կոչի անհամբեր աստուածածին, նա ի բաղմանալ անաւրինութեանն մերոյ վասն բաղում մեղաց մերոց, անաւրէն նալիւն հալալալ ալթուն պուղալն իբրև դըռափսալ և դանձն առաջին, խաբեալ զարքայն հալոց Լեոն բաղում բանիւք, և անհոգեցեալ, և էր արքայն անհոգ նստեալ լատանալ և աշխարհն ամենայն անհոգ ամեն մարդ ի լիւր սուռն ու ի լիւր գործս, վստահ ի սուլտանին ամանաթն և ի լալն որ մեր դեսպներն մալոմն առ սուլտանին և առ անաւրէն ամիրալս, և սալ խաբէութեամբ առեալ զհալալ հեծեալն տնուանելով լնփրատ ի ճապարն կու երթամ, ու լիշուեց լեկիլիւս ի ԻԶ ի մալիսն ի Ե շաբթի լաւուր Համ-

բարձման փրկչին, և երեկ զորդ ի մլուհն ու ի լատանալ ու ինչիլի տարուուս, և առեալ բաղում ըռդակս և մարդ ու անասուն ու արար ուժով սպանումն՝ ու արար բաղում աւեր ու արեցումն, և արքայն հաղիւ զերծեալ լատանալ ու զնայեալ ի մուկոնին առջև, և կեցաւ թաւր լերկիրս ու ելաւ, և վարեցաւ զիրք սուրբ աւետարանս ի հալս հետ. ալլ անաթից Կիկղեցւոյն, և գտեալ զսալ աւրհնութեանց արժանին սպառուելին իշխանն պ'ր Պետրոս Խըպտենց՝ որ առաքեալ էր զնսպան առ անաւրէն ամիրալս, և վասն անտուժոյ սիրուն և զիտելոյ որ մեր եկեղեցւոյն էր, զնեալ զսալ և բերեալ լերկիրս և ետ լանարժան ծառայս աստուծոյ և ձեր ի վասիլս որ էմ թղթաղիր արքայիս, և առեալ զգինն զոր զնեալ էր լանաւրինացն, և ես մեծաւ սիրով և լոյժ փափագանաւք ընդալալ զսալ ի վալիս սուրբ եկեղեցեաց և սուրբ տաճարին տիրամօր աստուածածնին, և լետ աւերելոյ զերկիրս անաւրինացն, դարձեալ խաբէութեամբ թէ աչն զորեղաւ եղաւ սուլտանն ընդ ձեզ սէր է տուք զմալն ու ի առխապա մի մալ ի մէհէ որ էր զձմր դրամ ու տարի մի ի բուն ինչիլի մէկալլ ասլորին ձեծելով և հարամով անցոլց զերկիրս, և լետ մալին առնելոյն սուլտանին ուղեց զբերդերն զղետին աչն զէհին զոր անլ էր տված, նալ արքայն Լեոն առաքեաց զպարոն պաղտին մարալախտն և զիս զանարժանս զվասիլս առ սուլտանն եղիպտոսի նասրն, ուղեւով ամանաթ որ ինք արքայն երթալս առ ինք վասն փրկութեան երկրիս, նալ անաւրէնս ալս ալթուն սուլտանս արդել զմեղ ի հալպա բերդն ի զնդան և ինք մտաւ հեծելով լերկիրս ու ի առ զղլորն և լետ բաղում տանջանացն ի զնդանն հետ է մսուն հանեալ վախճան մարալախտուն, որոյ ողորմեսցի տէր լիսուս և տացէ իւր պսակ մարտիրոսական և բերեալ զմարմինն ի հալք և զիս արդել անաւրէր ամրալն բոլոր տարի մր, ու կուզէր սուլտանն զոր ջահանն կտրէր ու շատ ջանաց արքայն վասն փրկութեան երկրին ու չկարաց, և լերկրորդ տարին մտեալ նոյն ամիրիս ալլ վար լերկիրս բաղում հեծելով ու բաքնով ու աւերեցին զերկիրս զլեոն ու դաշտս ու ալրին բաղում սպանումն ու առին անքաւ ծառալս ու ան ու կու կորսնվէր երկիրս՝ նա անճարկեցաւ թագաւորն ու կատարեաց զսուլտանին կամքն ու երես զոր կտրէր ջահան բերդերովն ու զերկիրն ու զպանծալին ալսա զոր բաղում ծախիւք շինեալ էր և հասեալ ի

յանարժանա խնամքն աստուծոյ բարձրելոյն բարեխաւսութեամբ իւր սուրբ մօրն սուրբ կուսին մարիամայ, աղատեցաւ ի բանտէն ու եկի լերկիրս և ի սոյն ամի տաղնապ մեծ էր լերկիրս Կիլիկիոյ լահէ անաւրինացն, ի սրոյ ի գերութենէ և ի սովոյ, որ չմնաց չէն լետ ի բերդերոյն զոր մնացին ճշմարդութիւն լետ արնուց որ բերդերն ի փախուստ էին ակն ունելոյ ողորմութեան աստուծոյ և ես գրեցի զալս չափս առ ի լիշելոյ զանարժանս. արդ աղաչեմ զամենեսեան վասն սիրուն քրիստոսի որք աւգտիք ի սուրբ աւետարանէս, կարգալով, կամ աւրինակելով լիշեցէք առաջի քրիստոսի և մեղաց թողութիւն խնդրեցէք, նախ և առաջին ստացաւաց սուրբ գրոցս, և երկրորդ ստացաւդին զսալ սիր սիրունին, և իշխանին պարոն պետրոսի որ ազատեաց զսալ լանաւրինացն, և լետոյ անարժանիս վասլի և ծնողաց իմոց ստեփանոսի և մարիամու և ալիծին, և ամուսնոյն իմոյ սպլի և ղեռաբոյս որդեկին իմոյ անդրանկին լակորալ որպէս զի ընդ միոյ հարուրապատիկ հատուսցէ ձեզ աստուած աստ և ի հանդերձեալն. գրեցի զսա ի դառն և լետին ժամանակիս ի մարդեղանալոյն քրիստոսի աստուծոյ լուսոյն մերոյ ՌԳՃԼԷ, և ի հայոց թվ. 222 (1337) և քրիստոսի փառք լախտեանս ամէն:

Այլիկեան երրորդ աւետարանի փալտէ կազմը հազցրած է ոսկեջրած արծաթապատի մէջ, որի մի երեսի վերայ ձևացրած է աւետարանիչների պատկերները և երեսի չորս բոլորը խոշոր տառերով գրուած է հետևեալ լիշատակարանը. «Գրեցաւ աւետարանս և կազմեցաւ հրամանաւ Տեառն Կոստանդեալ կաթողիկոսի լիշատակ իւր ծնողաց իւրոց և եղբարց ամէն», իսկ միւս երեսի վերայ ձևացրած են Փրկչի, Տիրամօր և Յովհաննու Կարապետի պատկերները և երեսի չորս բոլորը դարձեալ խոշոր տառերով գրուած է. «Քրիստոս Աստուած ողորմեն Տեառն Կոստանդեալ կաթողիկոսի և ծնաւդաց իւրոց և եղբարց և եղբաւր որդեաց ամէն թվ. 2Ի... Այս աւետարանի արծաթապատն աւելի նուրբ, գեղեցիկ և ճաշակով է շինուած, քան թէ միւսներինը, և հնութեան կնիք է կրում. հաւանական է, որ դա հալ վարպետի գործ լինի:

Ամբողջ գիրքը, որի կազմի կարը քանդուած է, տեղտեղ թերթերը միմեանցից բաժանուած, տեղտեղ էլ թերթերը և պատկերները թափուած, ունի իւր մէջ 365 մագաղաթ թերթ, որոնցից 359-ը բռնոււմ է երկվ զրած բնագիրը, 5-ը

լիշատակարանները և մէկը բաց թերթ։ Աւետարանները չունին ոչ նախադրութիւն և ոչ գլխակարգութիւն, չկալ և սովորական համաբարբառը։ Իւրաքանչիւր աւետարանի սկզբում գրուած է աւետարանչի մեծադիր պատկերը։ Յովհաննու աւետարանչի պատկերը Ղուկասի աւետարանի վերջին երկու թերթի և Յովհաննու աւետարանի առաջին թերթի հետ միասին ընկած, կորած է։ Ընկած են երևում և ուրիշ մեծադիր պատկերներ, որոնցից մէկն է և մեր լիշած հայոց թագաւորի պատկերը, որ այժմ զետեղուած է ձեռագրի վերջում, լիշատակարանների մէջ։ Բացի թագաւորի և աւետարանիչների պատկերներից, դա ունի իւր լուսանցքների վերալ և ուրիշ մանր պատկերներ ու սովորական զարդերը, որոնց բոլորի նկարչութեան արուեստն էլ նուրբ է, ներկերը թարմ և գեղեցիկ ճալակով ընտրած։ Աւետարանների սկզբի տողերը և գլուխների գլխագրերը գրուած են զարդագրերով և ոսկեգօծ երկաթագրերով, իսկ բոլոր բնագիրը միջին մեծութեամբ մաքուր բոլորագրով։

Աւետարանը, գրուած է, ինչպէս երևում է կաղմի արձաթաղատի և միւս լիշատակարաններից, Կոստանդին կաթողիկոսի ծախքով և հրամանով Հռոմկլայում Կիւր'' (Կիւրեղ) գրչի ձեռքով Հռոմից Բարսեղ կրօնաւորի ձեռքով բերուած մագաղաթի վերալ «բարեպաշտ» Հեթում թագաւորի, «բարի շառաւիղ» Լևոն և Թորոս արքայորդիների և «արքահոգի» Ջապէլ թագուհու ժամանակ Հայոց ՈՂԸ (124») թուին։

Ձեռագրի վերջում գրուած երկու լիշատակարանից մէնք իմանում ենք, նախ, որ Կոստանդին կաթողիկոսը, որ հրամալի է գրել այդ աւետարանը և «վալեյացոցանել լոսկւոյ սրբոյ և ի պատուելի երանգոց սիրելի առնել զսա ներքոյ և արտաքոյ», գրասէր լինելով մանաւանդ թէ աստուածասէր, գրել է տուել այլ ևս ուրիշ աւետարաններ ու գրքեր, երկրորդ, որ զա պատկանել է Հեթումի որդի Լևոնին, որ ընծալի է դորան իւր քրոջը «աստուածասէր և բարեփառ», «կալսերածին և ծիրանասնունդ» տիկին Տամֆիմէին նորան մխիթարելու համար։ Իմանում ենք նոյնպէս, որ Հեթում Ա. թագաւորը, բացի այդ Տամֆիմէից, ունեցել է այլ ևս չորս դուստր—Բրըձես Սպիլ, որ եղել է բարեպաշտութեամբ զարդարուած, Աստուծոյ օրէնքը սիրող, աստուածասէր և ամեն բանով նման իւր ծնողին, տիկնանց տիկին Ըսիթան, որ այդ

ժամանակները, արևմտյան 1263 թվին, ժամանած է եղել, Ջաղուռ, որ ոչ միայն անուշով, այլ և բարեպաշտութեամբ ևս նման է եղել իւր մօրը, և Մարիուն, որ եղել է քուրերից կրտսերը: Տամֆիմէն, որ մարդու է տուած եղել Սաիտոյ աստուծապահ քաղաքը, «Սատանայական պատերազմներից» վշտի է հանդիպել, հաւանականաբար արիացել է, և իւր Պաղիաւ և Ղուռն որդիների և Մարկրաւն կամ Մառինէ դստեր հետ տեղափոխուել է Կիլիկիա իւր հօր Հեթումի և իւր եղբայր Լեոնի ու Թորոսի մօտ հայոց ՉԺԻ (1263) թվին ²³): Սաղմո-

²³) Կիլիկիայումն է գրուած և Նախիջևանի եկեղեցիներին պատկանած ձեռագրերից ամենահինը — ու. Լուսաւորչի Հայոց 1149 թվին գրուած աւետարանը:

Թուղթք՝ 239), որից երկու թուղթ լիշատակարան, մնացեալը բնագիր մի բաց մաղաղաթ թիրթ և երկու կողմից երկու երկու մաղաղաթ երկաթադիր հին աւետարանից թերթեր, գործածուած իբրև կողակալ: Մեծութիւն՝ $9\frac{1}{2} \times 6\frac{1}{2}$ սանտիմ. Տողք՝ 21, Գրութիւն՝ երկսիւն. Գիր՝ բոլորագիր, երկու զանազան ձեռքով գրուած. կաղմ՝ կաշեպատ փայտ. նրւթ՝ հաստ, կոպ՝ տ մաղաղաթ. ժամանակ գրութեան՝ Ո.Գ. Հայոց. Տեղի գրութեան՝ Հռոմկլա գղեակ. Գրիչ՝ Բովհանէս սարկաւագ Հռոմկլացի. Հանգամանք՝ լաւ պահպանուած. իւրաքանչիւր աւետարանի սկզբում կարմրաներկ խորաններ և կարմրադեղ գլխադրեր, անձալակ և կոպիտ սովորական զարդեր: Հին լիշատակարան. «ի վեց հարկերերորդի. վաթսրներրորդի. երրորդի չրջագալութեան յոմարի հայոց, ի հայրապետութեան տեառն յոհաննիսի, կորովամիտ և խոհմաստ առաջնորդի: Եւ ի թագաւորութեան Լեոնի, որդոյ Ստեփանէի: Եւ ի սուլտանութեան մէլէքըլէտէրն, որ տիրէր Եգիպտոսի և սուրբ տեղեացն մարաքաղաքն ամենայն տիեզերաց Նրոսաղէմի և Գամասկոսի. և Նդեսէա. և Ծոփաց երկրին Ղլաթա մինչև ի սնուռն վրաց, Եւ ի թագաւորութեանն վըրաց՝ լաշո որ տիրէր տայնաց և անուր. և այլ բոլում քաղաքաց առաջին տանուտէրացն հայոց, ալանաց և աղուանից, ի կարնոյ մինչև ի Պարսս: Եւ ի բռնակալութեան որդոյ Խոսրով շահին որ տիրէր երկրին Հռոմոց՝ Կիսարիոյ, Սերաստիոյ և Կաւնին. և այլ բոլում մարաքաղաքաց և Սինոպլին. մինչև ի ծովն լիբէացոց: Եւ ի թագաւորութեանն հռոմոց յաշքարո որ տիրէր ծովեղերաց, ովկիանոսի ի սինոպէն մինչև ի թագաւորեալ քաղաքն Կոստանդինուպոլիս. և սմա տիրէ ազյն փռանգաց խեալ ի հռոմէն: Եւ ի թագաւորութեանն ասորոց եհաննաի որ է ի հնդիկս ես Գրիգոր եպիսկոպոս և Կոստանդին քահանա արեանառու մեր ստացաք զդատուական և զգերաշխրհիկ և զտիեզերադար մատեան

որ, որ կաշուեպատ փալտէ կազմ ունի և գրուած է տգեղ բառերագրով և կարմրադեղ գլխագրերով ու թռչնադերերով հաստ, կոպիտ մազադաթի վերայ մի օմն լմեղապարտ Սատթէոս գրչի ձեռքով մօտաւորապէս Ժէ դարում, իբրև ձեռագիր ոչ մի արժէք չունի. դորա բնագիրն էլ մինչև անգամ լրիւ է, ալ մէջը տեղ-տեղ, իսկ վերջում բոլորովին թերթերն ընկած ու տեղը տպագրուած Սաղմոսից լրացրած և տեղ, նոր նօտագիր թերթեր դրած. Հետաքրքրականն ու արժէքն այդ ձեռագրի մրաւն այն է, որ դա կրկնադիր է. դորա մագաղաթը պատկանել է մի ուրիշ ձեռագրի, որի վերալից զգրուածքը ջնջուած է և տեղը գրուած է այդ Սաղմոսը:

Թէ դորա հիմքն ինչ ձեռագիր է կազմել, — սաղմոսի ձեռագրի գրութեան ներկայ հանդամանքներում մենք դժուարանում ենք որոշել. սակայն մենք կարող ենք ճշտութեամբ մի բան ասել, որ սրբուած ձեռագիրն երկաթագիր է եղել, որովհետև նոր գրուածքի տակից ու տողերի միջից շատ պարզ կերպով երևում են երկաթագիր տառեր, խօսքեր և մինչև իսկ ամբողջ նախադասութիւններ. Միտ դնելով այդ խօսքերին ու նախադասութիւններին, կարելի է գտցէ, ասել, թէ դորա հիմքը կազմել են Ս. Գրքից կամ Ճաշոցից և մի ասորական ձեռագրից կտորներ ու հատուածներ:

Յամենայն դէպս ցանկալի է, որ ներկայումս գտնուած զանազան քիմիական բաղադրութեամբ Սաղմոսի ներկայ բնագրի տակ ծածկուած այդ թէ հայոց և թէ ասորական ձեռագիրը, որ, գուցէ, մի շատ հին բան լինի, ընթերցանելի դարձնել, նամանաւանդ որ այս դէպքում չի կարող երկիւղ լինել, թէ կարելի է ներկայ ձեռագիրը փչայնել, քանի որ, եթէ այդ

սուրբ աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի թաղաւորին անմահի ի վալելումն մանկանց եկեղեցւոյ ի լիշատակ հօգուտ զինի ելից լաշխոհէ և ծնաւդաց մերոց ուղիորելոցն առ Քրիստոս. Արդ աղաչեմք զամենեւեան որի ընթեռնուք կամ աւրինակէք լիշեմջիք առաջի Քրիստոսի զտէր Գրիգոր և զՊատանդին քահանա ղստացաւդք սուրբ աւետարանիս. Եւ զեղբարսն մեր զհանգոցեալսն ի Քրիստոս զԿարապետն և զՎէորդ և զԾնաւդսն մեր և Քրիստոս զձեղ լիշէ լիւր ողորմութիւնն. Կրեալ եղև ձեռամբ նուստ զըջի լոհանիսի սարկաւադին հռովլայեցւոյ..... մեալ լաշխարհապահ տղեկիս հարապետանիստ քաղաքիս հայոց. Ընդ որում շնորհեսցէ զսա Քրիստոս ընդ երկայն աւուրս պատուական առաջն.

պատահի էլ, ձեռագրի արժէք չունենալու պատճառով, մի մեծ կորուստ չի լինիլ: Աւելորդ չենք համարում արտօնել նկատելիոր «Հանդէս Ամսօրեայ»-ի 1898 թուականի Յունիս ամսուայ համարում «Ակնարկ»-ը հալ հնագրութեան վրայ: հիմա ձեռքով գրուած հետաքրքրական լոգուածի մէջ մեր այս կրկնագիր Սաղմոսի վերաբերմամբ հաղորդած տեղեկութեան մէջ սպրդել է մի սխալ: Հալը Տաշեանին այդ մասին տեղեկութիւն հաղորդող պ. Սր. Զամինեանը սխալմամբ, փոխանակ Սաղմոսի գրիչ ներկայացնելու մեր վերոյիշեալ մեղապարտ Մատթէոսին, ներկայացրել է մի ոմն երէց Մխիթարի Սաղմոսի «Որհնութիւն Մովսիսի և որդւոցն խորալէի» գլխի «Աւած ի վերայ նոցա տէր յջուրս ծովուն. և որդիքն խորալէի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն» խօսքերի տակ մանր տառերով գրուած է այդ ձեռագրի հետեւալ միակ համառօտ չիշատակարանը. «Զմեղապարտ գրիչս զմաթէոսս. մին տէր ողորմիւ լիշեցէք ի սուրբ աղաթս ձեր. ամէն»: Յիսուսի տղաութեան գիրքը մեր սակաւաթիւ Վանկութեան աւետարանս կոչուած ձեռագրերից սէկն է. Դա մի հետաքրքրական անվանւոր գրուածք է, որի հեղինակութիւնը կամ խմբագրութիւնը վերագրուած է «Յակոբայ որդւոյ Յովսէփայ ևղբաւր»: Աւետարանիչների հաղորդած տեղեկութիւնները Քրիստոսի մանկութեան մասին, ի հարկէ, չեն բաւականացրիլ առաջին ջերմեռանդ քրիստոնէաներին. նոքա բնականաբար ցանկացել են աւելի մանրամասն տեղեկութիւն ունենալ Աստուածորդու մանկութեան մասին, ցանկացել են տեսնել Փրկչի մէջ դեռ մանուկ հասակից այն աստուածային լատկութիւնը, այն աստուածային իմաստութիւնն, ու կառուրելութիւնը, այն հրաշքների գործելու և աշխարհ զարմացնելու կարողութիւնը, որ լեռնային արական հասակում երեւցան նորա մէջ: Ահա բարեպաշտ քրիստոնէաների այդ ցանկութեան լրումն, այդ բաղձանքների կատարման արգասիքն ու հետեանքը կարելի է համարել և այդ տեսակ անվաներ աւետարանների խմբագրուելը քրիստոնէութեան առաջին դարերում, որ միանգամ առաջ զալով մի որ և է քրիստոնեայ հասարակութեան մէջ, այնուհետեւ թարգմանուած են ամեն լեզուներով և հետզհետէ տարածուած են միւս բոլոր քրիստոնեայ հասարակութիւնների մէջ, ամենքի համար սիրելի ու ակործելի ընթերցանութեան նիւթ դառնալով:

Հալերն ընդունելով քրիստոնէութիւն, ինչպէս լալտնի է ձեռնարկեցին թարգմանելու Ս. Գրքի հետ միասին և բոլոր ալն եկեղեցական գրքերը, որոնք ալն ժամանակները գտնուում էին ասորի և լոլն գրականութեան մէջ: Շատ խկական գրքերի հետ անխտիր թարգմանուում են ալն ժամանակները և ալն ապոկրիֆները, որոնք արդէն գոլացել էին հալերից առաջ քրիստոնէական գրականութիւն կազմած քրիստոնեայ հասարակութիւնների մէջ, չենք ասում արդէն, որ նոքա հետեւելով ուրիշների օրինակին, ինքեանք էլ ձեռնարկում են կազմելու իւրեանց սեփական ինքնուրոյն ապոկրիֆները զանազան լազգալին սրբերի ու վկաների մասին: Մանկութեան աւետարանը հալոց ահա ալք թարգմանական ապոկրիֆ գրականութեան ամենաընտիր ներկայացուցիչներից մէկը կարելի է համարել: Թէ որքան է պահպանել մեղ համար ամենածախ ժամանակն ալք ապոկրիֆի ձեռագիր օրինակներից,—մենք ալք մ ճշտել չենք կարող ասել, որովհետև մինչև ջալսօր դեռ մեր ամենուրեք գտնուած ձեռագրերի հաւաքածոներն ուսումնասիրուած ու հետազօտուած չեն: Բալց արդէն լալտնի հաւաքածոների վերաբերմամբ կատարուած հետազօտութիւններից կարելի է եզրակացնել, թէ զոցանից ալնքան էլ շատ օրինակ չի մնացել: Ալք ալքպէս լինելով, հասկանալի է, որ Նախիջեւանի մանկութեան աւետարանի ձեռագիր օրինակն էլ պահպանուած ու մեր ձեռքը հասած միւս սակաւաթիւ օրինակների մէջ կարող է իւր նշանակութիւնն ունենալ:

Ձեռագիրը, որի մէջ, բացի աւետարանից, գտնուում են «Պատմութիւն սրբոյն Յակովբայ զոր գրեաց Մեղիգէ աշակերտ Մարուգէի միալնակեցի», «վարք և վկայութիւն սրբոց Գոհարինեանցն որ կատարեցան ի փառս աստուծոյ, սնառ անքուն որդանցն», «Յովհաննու Լոսկերերանի պսացեալ վասն ապաշխարութեան», «վարք սրբոյն Դիոնեսիոսի եպիսկոպոսի աշակերտի առաքելոյն Պաղ.որդի Սոկրատոս զատաւորի աթենացոց քաղաքի իմաստնոց, սա պատմեաց լաղազս անձին իւրոյ և ասէ», «Իրանելոյն Աքրա Եփրեմի խորին ասորոյ ասացեալ լորդորումն և լապաշխարութիւն քաղաքին Նինուէացոց», Տեառն լոհաննու Ոսկերերանի կոստանդինուպալսի եպիսկոպոսապետի ի խաչելութիւն տեառն, կաշեպատ փալտէ կազմունի և գրուած է հաստ թղթի վերալ տգեղ, խոշոր բոլորագրով Սեբաստիալում՝ «մերձ ի լուսաղարդ և աստուածաբնակ

տաճարիս որ ի ձեռն սրբուն Գրիգորի մերոյն լուսաւորչի հիմ-
նացեալ և հաստատեալ էր Կոստանդին կաթողիկոսի, շեխում
թագաւորի, Միջերկրեալ կողմանց իշխան Սալաւորի որդի
խալաթատին սուլթանի լուսակալութեան և Սեբաստիոյ Տէր-
Գրիգորի եպիսկոպոսութեան ժամանակ հալոց 929 (1239)
թուին Աստուածատուր գրչի ձեռքով։ Դա ընդհանրապէս վատ
է պահպանուած—քրքրուած, թերթերը թափթփած, փտած և
վերջից ու միջից պակասաւոր ու թերի։ Ամենալաւ պահպա-
նուածն Աւետարանն է, որի առաջին թերթի ճակատին կարմ-
րադեղ նկարած խորանի մէջ գրուած է. «Դիր աղալութեան
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որո ասացեալ է Յակոբայ
որդու լուսեփալ եղբարս։ Սկսում է կարմրադեղ գլխադրով՝
«ի լուսաշին ամի տէրութեան աւդոսեալ կալսեր հոռոմոց աշ-
խարհին» և այլն։ Դորա ընկած թերթերի տեղ գրուած ու
կաղմուած են հին հետ նոր նստրով գրած թերթեր։ Յիշատա-
կարանը, որից մենք քաղեցինք ձեռագրին վերաբերեալ վե-
րոյիչեալ տեղեկութիւնները, գրուած է վերջում։ Բացի այդ
գլխաւոր լիշատակարանից, աւետարանին վերաբերեալ մի հա-
մառօտ լիշատակարան էլ կալ գրուած Ս. Յակոբայ պատմու-
թիւնից չտու, որից մենք խմանում ենք, թէ ալդ ձեռագիրը
լիշատակ է եղել Կաֆայի Ս. Զովհաննէս Աւետարանչի եկեղե-
ցուն—Սլս քրիստոսի աղալութիւնիս լիշատակ է գրիգոր քա-
հանալի նախնեաց և է լիշատակ ծնողաց զարմից և զաւակաց
նորին։ Ի թուականութեանս հալոց Թիս (1591) առ ի տէր լո-
հաննէս եպիսկոպոսէն և եղի լիշատակ սուրբ լոհաննէս աւե-
տարանչի։ Եթէ ո՞ք ուզէ կարդալու կամ օրինակելու չի խնայէք
տագ գրաւ կնով զէրալ ալս գիրկս ա տարի մի կորաւ ձեռքը
ձեռք տալով ով աստուծոյ աւրհուլթիւն ուղէ տեղը հասուցանէ
ով պահէ նդովեալ եղիցի»։

Տղալութեան գրքի հիւքը կաղմում է աւետարանը, զա-
նաղանութիւնը միայն ալն է, որ որտեղ աւետարանիչները
քաւականացել են մի նախադասութեամբ, մի խօսքով և մի-
շն իսկ մի ակնարկով, այնուհղ ապոկրիֆի հեղինակը մի ամ-
բողջ պատմութիւն է աւելացրել, ընդլայնել, զարդարել է զա-
նաղան ընդարձակ լաւելումներով աւետարանիչների պատմա-
նեքը, նկարագրածները։

Պատմութիւնը սկսում է Յովակիմի՝ զոհաբերութեամբ,
որ քահանայապետը և քահանաները չեն ընդունում, որովհե-

տե նա անգաւակ էր, որովհետեւ նորա կին Աննան ամուլ էր Յետոյ մանրամասնաբար պատմում է Աննալի լղանալը, ծնելը, Ս. Կրս Մարիամի սնուելը, տաճար տարուելը ու ալնտեղ մեծանալը, Նդիսաբէթի լղանալը, ս, կողմի Յովսէփին լանձնուելը, հրեշտակի աւետումը, կոլտի լղանալը, Յովսէփի և Մարիամի Բեթղէնէմ գնալը, Բրիստոսի ծնունդը, մոգերի դալը, հովիւների երկրպագութիւնը, թլպատութիւնը, Հերովդէսի հալածանքը, սուրբ ընտանիքի Նդիպոսս փախելը և ալն-կողմերի քաղաքներում թափառելը, Բրիստոսի հետդէտէ մեծանալը, հասակակից մանուկների հետ խաղալը, Գամաղիէլ լիմաստունին աշակերտելը, հիւսնութեան և ներկարարութեան արհեստները սովորելը, սուրբ ընտանիքի Հրէաստան վերադառնալը և Գալիլիոյ Նազարէթ քաղաքում բնակուելը և վերջապէս, Բրիստոսի Նրուսաղէմ գնալը և իւր անձը ժողովրդին լալտնելը:

Ամեն քաջափոխում մէջ է բերում երկար խօսակցութիւններ, ամեն քաջափոխում ոգտումում են զանազան հեքեթական գործողութիւններ, անդադար հրեշտակն երևում է, ցուցմունքներ է անում և առաջնորդում է Յովսէփին, Բաղմաթիւ են նամանաւանդ հրաշքները, որոնք գործում են Մանուկ-Յիսուսի ձեռքով ալն տեղերում, որտեղ ապրում են նորա, որտեղից անցնում են նորա: Մեհեանները կործանում են, կուռքերը խորտակում, քորմերը հարիւրներով փշատակների տակ մնում, կոյրերը տեսնում են, կաղերը գնում են, անդամալուծները, վիրաւորեալները, հիւանդները բժշկում, համրները խօսում են, խուլերը լսում, մեռեալները լարութիւն են առնում, թաղաւորները, իշխանները, դատաւորները գիտունները և լիմաստունները խալտառակում, ամօթահար են լինում:

Մէջ է բերում, ի միջի ալլոց, մի գուշակութիւն, որ իրրեթէ մոգերը ստացել են իւրեանց նախնիքներից Աստուածորդու ծննդեան մասին. — «Ձի լետ աղամալ ելանելոյն ի դրախտէն, և կալենի սպանանելոյ զեղբայրն զհաբէլ սուդ առադամ ի վերալ մահուան որդւոյն իւրոյ քան զելանելն նորա ի դրախտէն. ետ աստուած աղամալ որդի զսէթ որ թարգմանի որդի մխիթարութեան, զի աղամ առաջ ցանկացաւ աստուածանալ և աստուած խոնարհեցաւ մարդանալ վասն աստուել զթոյ իւրոյ խոնարհութեանն, ետ աստուած զուխտն և

ղերդումն ընդ նախահալոն միջնորդութեամբ գրեալ և կընքեալ մատամբն իւրով, եթէ զվեցհազարամերորդի առաքեմ զմիածին որդին զբանն աստուած որ եկեալ մարմնանա ի դաւակէ քումմէ, և լինի որդին իմ որդի մարդոյ, և զքեզ դարձեալ վերստին լառային փառս հաստատեցից, լայնժամ եղիցիս դու աղամ անմահացեալ մարմնով աստուած ընդ աստուածս միաւորեալ իբրև զմի ի մէջ ճանաչել զբարին և զչարս:

Ամբողջ աւետարանը, որ մեր ձեռագրի մէջ բռնում է 146 թուղթ և մի էջ, պատմուած կամ գրուած է չոր ու ցամաք ոճով, շատ տեղ մինչև իսկ երկար, տաղտկացուցիչ կըրկնութիւններով: Շատ սակաւ, երբեմն միայն ոգևորուել է ապոկրիֆի հեղինակը և մի առանձին շեշտ ու զգացմունք մտցրել իւր գրուածքի մէջ: Առանձնապէս արժէ կանգ առնել երկու կտորի վերալ, որոնցից սրտի զեղմունքի, խոր զգացմունքի և մի լալտնի աստիճանի կենդանութեան ու բանաստեղծական աւիւնի տպաւորութիւն է ստացուում: Այդ երկու կտորն էլ Յովակիմի և Աննայի պատմութեան մէջ է: Յովակիմը, երբ նորա զոհը և ընծաները չեն ընդունուում, տխուր ու արտում վերադառնում է տուն, ամեն բան պատմում է Աննային և ինքն իւր հօտերի ու հովիւների հետ հեռանում, գնում է անապատն՝ ալետեղ միայնութեան մէջ ողբալու իւր անբաղդութիւնը: Աննան մնում է տանը մենակ և կոտորուած սրտով անդադար սգում ու լաց է լինում: Մէկ օր էլ նա իջնում է պարտէզ, նստում է դռնի ծառի տակ, նսլում է իւր չորս կողմը բնութեան զեղեցկութեան և սկսում է ողբալ իւր ամութիւնը: Նա երանի է տալիս իրեն շրջապատող ծառերին, թփերին, ծաղիկներին, արօտներին, թռչուններին, որովհետև նոքա ծնունդ ունին, աճելութիւն ունին, իսկ ինքը չոր, խոպան, անպտուղ և ամուլ է: «Ո՛ւմ նմանեմ ես, աօտւմ է նա, կամ որով նմանութեամբ նմանեցուցից զանձն իմ: Նման եմ ես զաւսացեալ և անպտուղ ծառոյ՞մերձ ի չորացեալ արմատախիլ լինելոյ: Ո՛ւմ նման եմ ես: Նման եմ ես հնացեալ փուտ փալտից և մերձ լապականութիւն հասեալ և հուր բորբոքելի լալրումն: Նման եմ ես ապառաժ քարանց անշնչոց զի ոչ ունին արմատս և ոչ զալարութիւն լինքեանս և ոչ ծնելութիւն: Ո՛ւմ նման եմ ես: Նման եղէ անապատի խոպանացեալ լերկրի որ ոչ ունի զալարութիւն նիւթոյ կանա-

չութեան և աճումն լինելութեան: Ո՞ւմ նման եմ ես: Նման եմ ես անցաւոր մեղաւորաց որ ոչ ունին պտուղ արդարութեան:

Բայց ահա նա լղանում է և ծնում է Մարիամին.— նորա ուրախութեան չափ չկալ. նա անդադար գգւում ու սիրում է իւր սիրունիկ աղջկան: Երբեմն էլ, երբ մանուկը դառնում է 108 օրուան, նա խոշնում է, որ նա «թեւկոխէ. մանուկը մի երեք քալլ առաջ է գնում ու վերադառնում, ընկնում իւր մօր գիրկը: Այն ժամանակ մայրն առնում է նորան իւր ձեռքերի վերայ և ղըղուկով ասում է.

«Դու Մարիամ, սուրբ կուսից մայր,

«Դու բարի արմատ տնկոց բարունակ շառաւիղ.»

«Ի քէն առաւատն ծաղէ արուսեակն»,

«Լոյսն նման լուսնի, քան զաստղ պայծառ արեւու»,

«Շող արեգական, այդ տուընջեան, ծագումն արեւելից արփուն»:

9

Մասնաւոր մարդկանց ձեռքին դտնուած ձեռագրերից արժանի են ուշադրութեան, բացի Քելլէշահիննց Յաւսմաւուրքից, որի մասին արդէն խօսեցինք, Օղաբաշենց աւետարանը և մեր Վարդան-գիրքն ու Տաղարանը:

Օղաբաշենց աւետարանը նշանաւոր է, նախ, նորանով, որ երկաթագիր է, երկրորդ, որ Նախիջկանում ներկայումս եղած ձեռագրերից ամենահինն է: Նա գրուած է տեղ-տեղ նուրբ, տեղ-տեղ էլ հաստ մագաղաթի վերայ միջին-մեծ տպեան երկաթագրերով Հալոց Ուր (1193) թուին բարեպաշտ Լևոն Բ. թագաւորի և Գրիգոր կաթողիկոսի ժամանակ Կիլիկիոյ Սկատինայ ղղեակի մօտ գտնուած «Պաւղոսական» կոչուած անապատում:

Ամբողջ ձեռագիրը, որ ամփոփուած է կաշեպատ փալտէ կաղմի մէջ, պարունակում է իւր մէջ 313 և մի էջ մագաղաթ թուղթ, որից 296-ը բռնում է երկսիւն գրուած բնագիրը, 9 թուղթ Համաբարբառը, 2 թուղթ և մի երես Յիշատակարանը և 6 թուղթ բաց մագաղաթ՝ սկզբից, միջից և վերջից: Կաղմի մի երեսը դատարկ է, իսկ միւս երեսի վերայ անկիւններում գտնուում են արծաթեայ եռանկիւնի զարդեր, մէջ տեղը չորս արծաթեայ խաչ՝ երկուսը Քրիստոսի խաչելութեան

պատկերով, մէկը բոլորովին դատարկ, մէկն էլ հետեւալ լի-
շատակարանով. «Յիշատակ խաչս Նազուխանի որդի Գէվորգի
և ետ բշկարան սուրբ աւետարանս ի վալելումն տէր լօճան-
նէսին թվին ՈԲՃԺ Թ.»։ Իւրաքանչիւր աւետարանի առաջին
երեսը դրուած է խոշոր ոսկեզօծ զարդագրերով և իւր ճակա-
տին ու լուսանցքներին վերալ ունի խաչադարձ և սիրամարգա-
ղարդ զեզեցիկ նկարներ ու պատկերներ։ Աւետարանների ա-
մեն մի տունը սկսուած է խոշոր գլխագրով, ամեն մի գլուխ
ոսկեզօծ տառով։ Շատ զեզեցիկ են և կանոնադաշտակները,
որոնք ամփոփուած են ճաշակով նկարուած խորանների և
կամարակապ դարդերի մէջ։

Ընդհանրապէս ալդ աւետարանը լաւ է պահպանուած.
տեղ տեղ միայն թանաքը կորցրել է իւր բնական գունը և
մազազաթը խոնարհութիւնից զեղնել է, որից և տառերն եղ-
ծուել են ու գրուածքը դժուար ընթեռնելի է դարձել։ Դժբաղատ-
բար ալդ փորձանքին է ենթարկուել և դժուար ընթեռնելի է
դարձել և ձեռագրի գլխաւոր լիշատակարանը, որ գրուած է նոյն
խակ ձեռքով և տառերով, որով գրուած է և ամբողջ աւետարանը։
Մենք ասում ենք դժբաղդաբար, որովհետեւ ալդ լիշատակա-
րանը պատմական հետաքրքրական բովանդակութիւն ունի և
նորա եղծուած և նամանաւանդ թերի լինելը մեզ միջոց ու
հնարաւորութիւն չի տալիս ամբողջովին վերականգնելու նո-
րա բնագիրը, որ, դուցէ, շատ կարեւոր տեղեկութիւններ է
պարունակել իւր մէջ։

Ալդ լիշատակարանը մեզ պատմում է Նրուսաղէմի Աա-
լահեդինի ձեռքով առնուելու, զերմանացոց կալսեր Ֆրեդե-
րիկոս Շէկամբուրտի դալու և խեղդուելու, նոյն Սալահեդինի
Կիլիկիա արշաւելու և Ղենի զորութեամբ նորան դէմ դնելու
հանդամանքների մասին։ Բաց արմէ կարգալ ամբողջ լիշա-
տակարանը, որի բնագիրը մենք կարգում ու վերականգնում
ենք հետեւեալ կերպով. «Յամի Ոարիւրերորդի քառասներորդի
երկրորդի հակադնեան տաւմարիս ի հալրապետութեան տն
Գրիգորի կաթողիկոսի Հալոց, լիշխանութեան բարեպաշտ
իշխանին Ղենի, խկ ի բռնակալութեան Հաքարացոց ումն-
մըն Սալահատին կոչեցեալ ըստ իւրեանց առասպելաբանու-
թեանն, որ և տիրեաց եղիպատացոց և մինչև ի կողմնս ա-
րևելից, և զքաղունս լաղզայնոց իւրոց արկեալ ընդ իշխանու-
թեամբ իւրով, և զաւրացեալ ալսու սկսաւ պատերազմել ընդ
սուր քաղաքն Նրուսաղէմ, և ընդ դաւրս նորա։ Զորս թու-

լացեալս գտանէր ի հաւատս զնոսա կարածեաւ և խոստմամբ պատրէր, և որ քաջ սպառազէնքն էին, բանիւք ողոքանաւք հաւանեցուցանէր, և զալս ի մեծամեծացն երգմունս հաստատէր, նոցա ունիլ զտէրութիւն աշխարհացն, և ալսպիսի խորամանկութեամբ քակեաց զամենեւեան ի միմեանց և արար ի միում տան խռովութիւն: Եւ զալս արարեալ ի բազում ամս, ոչ կարաց լաղթել նոցա, և ապա աւրինաւք խնդրէր պատերազմել ընդ նոսա, զի գիտէր զխռովութիւն և զերկպառակութիւն զաւրացն և զեփոս կացելոցն ի սուրբ ուխտէն: Եւ պատերազմեալ ընդ նոսա լաղթեաց. զի զաւրքն ընդ չորս մասունս բաժանեալ էին, և ձերբակալ արարեալ զթագաւորն և զաւրս պատերազմողս, որ կոչին Փրերք, և զալ զաւրսն կոտորեաց, և բռնացեալ առ զսուրբ քաղաքս Նիուսադէմ և զասկաղովն և զամենալն սահմանս աշխարհին, և գալ ի սահմանս անտիոքու, և քակեալ աւերեաց զաշխարհն և զամուրս նորա: Իսկ անաւրինացն պրինձ կոչեցեալ ոչ կարաց ելանել ընդդէմ նորա: Իսկ նորա կատարեալ զկամս իւրոյ չարութեանն, կամեցաւ մտանել լաշխարհն կիլիկեցւոց, նոյնպէս կարծելով զնոսա անարիս գոլ, քանզի զալս իբրև զառիւծ զաւրաւոր և զառնալոյ իբրև զաղուէս տկար: Քանզի լառաջ ասացեալ հայրապետն սուրբ Գրիգորիոս, որ ունէր զաթոռ հայրապետական սրբոյն Ղրիգորի, որ և շառաւիղ գոլով նորին լուսաւորչին Հայոց, պահպանեալ ընդ ամրածածուկ աջովն լամուր զղեկին կոչեցեալ ռոմիլի Սսիկլալ, որ և սա բազում նեղութիւնս կրեալ ի չրջաբնակ ալազանիցն ընդդէմ կացեալ աղաթիւք և զաւրութեամբն Աստուծոյ, և ըստ տուեցելոյն նմա Սստուծոյ շնորհիւ իւրոյ իմաստութեան և սրբոյ Հոգւոյն, խրատէր և զաւրացուցանէր զթագաւորս և զզաւրս կիլիկեցւոց ընդդէմ կալ նուա չարութեանն, որ և ոչ ևս կարաց ձեռլն արկանել ի նոսա: Այլ քանզի հայրապետն սուրբ տեսանելով զալսպիսի նեղութիւն տարակուսանաց, զառումն սլրբոյ քաղաքին և զաւերումն սրբոց տաճարացն և զգերութիւն ժողովրդեանն Աստուծոյ, զալլանդակ գործ պղծութեան նոցա, զոր ոչ է պարտ արկանել ընդ գրով, զալսոսիկ տեսեալ սլրբոյ հայրապետին, վշտացեալ ի հոգի իւր, միշտ աղաւթից և արտասուաց պարսպեալ, խնդրիւր զփրկութիւն սրբոյ քաղաքին և ժողովրդեանն Աստուծոյ, Գրէր և ցուցանէր զամենալն թագաւորացն լուսնաց և հռովմայեցւոց, զի թէ իցեն ինչ ձեռնհաս եկեցեան լազնութիւն քրիստոնէից, և ինքն աղաւթից և

սրբութեան պարապեալ: Եւ ապաշուեալ մի ոմն ի թագաւորացն հռովմայեցոց ալաման կոչեցեալ դայ մինչև ի սահմանս կլիկեցոց, և ոչինչ արեութիւն ցուցեալ, կատարի մահուամբ զետասող եղեալ, և զաւրին ցրուեալ բաժանեցան: Եւ մինչ ցալս վայր ինքն բռնացեալ ունի զքաղաքն սուրբ, լաւաջ ասացեալ զազանն հաքարացի: Եւ արդ լաւորս, լորս ասացաւ, ստացաւդ եղեալ սրբոյ տառիս սրբազան եպիսկոպոսն տէր Կարապետն քուերորդի գոլով սրբոյ վարդապետին Պաւղոսի բնակեցով առ սուրբ հայրապետին տեառն Գրիգորի, որ և արժանաւորեալ աշտինանի եպիսկոպոսութեան, որպէս և վաչկէ է ալնմ Աստուծոյ տնտեսի: Եւ արդ սիրող գոլով պատուիրանաց տեառն, մանաւանդ աւետարանական քարոզութեան սորին, և արդ ստացաւ զսա ի լիշատակ հոգւոյ իւրոյ և ի պարծանս եկեղեցւոյ: Եւ դրեցաւ սա լանապատին, որ կոչի Պաւղոսական, մերձ առ ամուր զղեկի Ակատինոյ, առ.....:

Մեր վարդան-գիրքը, կամ, ինչպէս զրիչը կոչում է, «Քարոզի կամ խրատական հոգոյ շահ գիրքը» մի մեծադիր կաշեպատ փափեալ կազմով տգեղ նօտրագրով հաստ, կոպիտ կապտադուրն թղթի վերայ գրուած ձեռագիր է, որ մենք ստացել ենք Նեստիթայ գիւղի Ս. Կարապետ եկեղեցւոյ քահանայից: Դա գրուած է մի ոմն դպիր Տէր-Մարտիրոս Աւետիքովի ձեռքով, որ զաղթականների հետ միասին Նախիջևան եկած քահանաներից մէկն է եղել: Ձեռագրի մէջ գրուած բաղմաթիւ լիշատակարաններից մէկից մենք իմանում ենք, որ այդ Տէր-Մարտիրոսը եղել է Կաֆայի բաղմաթիւ եկեղեցիների ղեկիւրներից մէկը և ձեռնադրուել է քահանայ իւր 55 տարեկան հասակում նոյն Կաֆայի Ս. Համբարձման եկեղեցւոյ վերայ Երուսաղէմի նուիրակ Գաբրիէլ եպիսկոպոսի ձեռքով հէնց զաղթականութեան տարին: Դա ձեռնադրուել է քահանայ Հայոց ՌՄԻԷ (1778) թուի փետրուարի 14-ին, իսկ զաղթականութիւնը սկսուել է նոյն թուականի օգոստոսի 17-ին, ահալէս որ զա Ղրիմում քահանայութիւն է արել ընդամենը միայն վեց ամիս, և գալով Նախիջևան, կարգուել է Նեստիթայ գիւղի քահանայ:

Թէ մեր և մրտեղ է գրել Տէր-Մարտիրոսն իւր «հոգոյ շահ գիրքը», մենք չենք կարող որոշակի ասել, որովհետեւ ինքը գրին այդ մասին ձեռագրի լիշատակարանների մէջ մի քանի տարբեր թուականներ է գրել և Ղարասու, Բեֆէ, Նոր-

Նախիջևան քաղաքներն ու Նեսուխայ գիւղն է գրութեան տեղ նշանակել: Գրքի սկզբում, օրինակի համար, գրուած է. «Առաջի գլուխ ըսկըսեալս էր թվին՝ Հայոց ՌՄԻԸ (1779) ըռուստաց գիւղն Նսուխայ Տէր-Մարտիրոս գպիր Աւետիքով ամենուդ ծառար». վերջում գրուած է. «Յիշեցէք տէր Մարտիրոս քահանայս 1799». լիշատակարաններից մէկում—. «Ի թվակալութեանն մերոյ հայոց ըսկըսեալըս ՌՄԻԸ (1799) վերջ լինելն ՌՄԻՆ (1796) ամսեանն Ապրիլի 1-ի որ դատիկ էր հայոց». մի տեղ էլ—. «Գրեցի իմով ձեռամբ անպիտան իբրը տէր մարտիրոսըս Հայոց թիւ ՌՄԻԳ (1794) ամսեանն Յուն. վարի մէջը ի Ղարասու քաղաքն». մի ուրիշ տեղ էլ—. «Գրեցաւ ծաղկալ նըման ժողովեալ գիրքըս ձեռամբ Անարծան մարտիրոս իրիցու ի նորըն նախիջևան 1796», և այլն:

Հաւանական է կարծել, որ Տէր-Մարտիրոս Աւետիքովն ինքն առաջ ապրել է Ղարասու քաղաքում և այնտեղ էլ 1779 թուին սկսել է գրել «հոգոյ շահ գիրքը», լետոյ զպրութեան պաշտօնով տեղափոխուել է Քեֆէ և այնտեղ շարունակել է իւր սկսածը, վերջապէս, նա դադարել է Նախիջևան և տղտեղ մերթ քաղաքում, մերթ Նեսուխայ գիւղում վերջացրել, գլուխ է հանել իւր հաստափոր գիրքը 1799 թուին:

Արծանի է ուշագրութեան աջն հանդամանքը, որ մի երկու տեղ ալս ձեռագրի մէջ գրչի անունը և գրելու թուականը գրուած է պալմանական նշաններով, որոնց գործածութեան մենք պատահել ենք և ուրիշ, սովորաբար նոր, ձեռագրերի մէջ Մի տեղ, օրինակի համար, գրուած է. «Գրեցաւ թիւ հայոց էր |||| ||| ||· · · |· · · · Ամսեանն ապրիլի 11 որ էր դատիկ, մի ուրիշ տեղ գրուած է. սբաւ է լիմար գրողաց և իմաստուն ընդերձողաց ||||· · · |· · · · · ||||· · · ||| | ||||· · · |||· · · ||· · · · |· · · · · գրեցաւ թվին հայոց |||| ||| ||· · · |· · · · մայիսի || |· · · · վերջն:

Այդպիսի պալմանական նշանների կարգալու բանալին Հայոց այբուբենն է, որով, ինչպէս լատինի է, գրուել ու գրուում են մեր մէջ և թուերը: Հայոց բոլոր այբուբենը բաժանուած է չորս խմբի՝ միաւորների, տասնաւորների, հարիւրաւորների և հազարաւորների ալսպէս.

ա	ժ	Տ	ս
բ	ի	մ	ս
գ	լ	ի	վ

դ	խ	չ	տ
ե	ծ	շ	ր
զ	կ	ն	ց
է	հ	լ	ւ
ը	ձ	պ	փ
թ	ղ	ջ	ք

Այս խմբերի առաջին տառերը—ա, ժ, ճ, ո, ց ուց են՝ ապա իս կարգերը—առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ, իսկ միւսները տառեր ու թուեր են։ Պայմանական նշանների մէջ խմբերի կարգերը նշանակուում են գծերով—/ առաջին կարգ, // երկրորդ կարգ, /// երրորդ կարգ և /// չորրորդ կարգ, իսկ տառերը և թուերը նշանակուում են կէտերով, որոնք դրուում են ալդ կարգերը ցուց տուող գծերի վերայ։ Եթէ կէտը մէկ հատ է և դրուած է առաջին կարգի վերայ—/, ուրիմն դա Բ տառն է, եթէ երկու կէտ է—/·, Գ տառն է, եթէ երեք—/··, Դ տառն է, և այսպէս բոլորը կարգով։

Այս կանոնի հիման վերայ կարդալով վերոյիշեալ պայմանական նշաններով գրուած լիշատակարանները, մենք կըստանանք առաջին դէպքում. «Գրեցաւ թիւ հալոց էր ՌՄԽ (1796) Ամսեանն Ապրիլի 1 (30.)» երկրորդ դէպքում.—«Բաւ է լիմար գրողաց և իմաստուն ընթերցողաց Տէր-Մարտիրոս է գրեցաւ ՌՄԽ (1796.) Մալիսի Ժն (15.)» Տէր-Մարտիրոսի Վարդան-գիրքը բազմաբովանդակ է. նորա մի մեծ մասը բռնում են ընդհանուր և Հալոց եկեղեցու վարդապետների քարոզներն ու խրատները, որոնք սովորաբար գտնուում են և մեր միւս Վարդան-գրքի մէջ. մի մասն էլ իւր, Տէր-Մարտիրոսի խրատներն ու քարոզներն են, որոնք թէև, ըստ իւրեանց բովանդակութեան, շատ անմեղ բաներ են, բայց իւրեանց աշխարհաբառ մասերով կարող են մեզ լիակատար կերպով զաղափար տալ այն բարբառի մասին, որով մեզանից հարիւր—հարիւր քսան տարի առաջ խօսել են Ղրիմի հալերը. երրորդ մասը, վերջապէս, կազմում են զանազան պատմական հատուածներ. որոնցից լատիսպէս արժանի են ուշադրութեան այն արձակ ու զաւանդոր կտորները, որոնք վերաբերում են Ղրիմի և Նախիջկանի գաղթականութեան։

Դոցանից, ալդ պատմական կտորներից, օրինակի համար, մենք իմանում ենք, թէ Վաֆան քրքան և Բնչ անուններով եկեղեցիներ է ունեցել, թէ ալդ եկեղեցիներից խրա-

քանչիւրը թուրքերի իշխանութեան ժամանակ որքան հարկ է հատուցանելիս եղել սուլթանին, թէ Նախիջևանի գաղթականութեան ժամանակ ինչ բարոյական նկարագիր են ունեցել թէոդոսիայի քահանաները, թէ Ղրիմի հայերը ինչ նահատակներ են ունեցել, որոնք զոհ են գնացել մահմեդական թաթարների մոլեռանդութեան, և թէ, վերջապէս, ինչ բնաւորութիւն է ունեցել Նախիջևանի գաղթականութիւնը—բռնի, թէ կամաւոր Յալսնի է, որ մինչև վերջին ժամանակներս մեր մէջ Նախիջևանի գաղթականութեան մասին այն կարծիքն էր ընդհանրացած, իբրև թէ գաղթականութեան պատճառն այն է եղել, որ Հայերը Ղրիմում նեղուելով թաթարներից, ինքեանք իւրեանց լոժար կամքով խնդրամատուց են եղել երջանկալիչատակ եկատարինէ Կալսեբուհուն, որ նա առնէ նոցա իւր բարձր հովանաւորութեան ներքոյ, գաղթեցնելով նոցա Ղրիմից Ռուսաստան, և Յովհաննէս Լազարեանը և Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը միջնորդ են հանդիսացել և կարողացել են, վերջապէս, յաջողեցնել այդ դժուար գործը:

Յիշէ՛, Ն. Դուբրովինի ձեռքով ու աշխատանքով վերջերումս հրատարակուած Ղրիմի Ռուսաստանի հետ միացուելուն վերաբերեալ բոլոր վաւերականները վերջնականապէս ջրեցին ու հերքեցին այդ կարծիքը, գաղթականութիւնը ներկայացնելով իբրև արդիւնք Ռուսաց Ղրիմի վերաբերմամբ գործ դրած քաղաքականութեան, բայց անհետաքրքրական ու անշահեկան չէ իմանալ այդ մասին և իւր, գաղթական ամբողջի կարծիքը, որ մենք գտնում ենք արտայայտուած այս վարդան-գրքում Կաֆայի Տէր-Մարտիրոսի բերանով:

Դպիր Աւետիքի որդի Տէր-Մարտիրոսը պատմելով Անուր կործանման լալոնի դէպքերի մասին և գաղթականութեան պատմութիւնն անելով Քելէշահինենց Յալսմաուրքի լիշատակարանի խօսքերով, իւր կողմից, իբրև ականատես և մասնակցող, դորա վերալ համառօտաբար աւելացնում է և Նախիջևանի գաղթականութեան պատմութիւնը: «ԴՁ, թվին ՌՄԻԷ Ամսեանն լուլիսի մէկէն ըսկըսվէցաւ Ղրիմի եղեալ հալք և հոռոմք գընալ ի ըռուստաց երկիրն, ասում է նա այդ լաւելուածի մէջ, վասն մեր ծովացե՛լ մեղացն բարկացեալ էր Աստուած ի վերալ մեր խաբէութեամբ հանէցին քաղաքներէս տուներըս մըլքերըս պաղ պաղճաներըս բոլորը ձքեցինք մեր

կամալըն որդոք զըստերօք սիրելեօք և բարեկամօք խաղաղ խընդալով մէկ տարի ըռուստաց զիւղ քաղաք մաշեցանք այս բանէս կատարինէ թագունին չէր խաղար. իրեն մեծամեծ. քըն առիլին թէ Ղրիմի միջի եղեալ թուրքն բաղում նեղութիւն կուտան տիւլ և գիշեր. թագաւոր ապրած կէնտս քէզմէն ողորմութիւն կու խընդրեն կու հալցեն թէ զմեզ այս հողէս վերցնես ի հոտ բերես մենք քեզ ծառալ եմք որդոց որդիս. որովհետեւ զիս սէրով խընդրիլին. հրաման է թող նոցալ խընդիրքըն թող նոցա հալցուացքն կատարլի շատ բան ըլալուն ետքը եկինք ըռաստովէ հողըն. թէնի քէնարն քաղաքի տեղ չաբէցին տըլլին մէկ մէկ հատ միրիխ տուն պարզեք արաւ թագունին. Ծ ալան ըռուպլինոց որն բառէ որն քէրբիճէ. ոմանք ուժ ունէցողը իւր բողովըն շինից մինչև ԲՃ ըռուպլին ԲՈ ԳՈ ԴՈ ըռուպլի շինեցին. քաղաքին անուներ դրին ի Նորըն Նախշիւան. առաջնորդ եղև մեղի Յովսէփ արք եպիսկոպոսն որով տէր Աստուած տացէ երկար կեանք. Ամէն:

Թէև մեծ միամտութիւն է կարծելը, թէ մեծամեծները կարող էին խաբել ալնպիսի սրամիտ և ամեն բան իւր սիրական խելքով անող, ամեն բանի մէջ թախանցող թագունուն, ինչպիսին եղել է երջանկալիշատակ Եկատարինէ կալսերուհին, բայց շատ հետաքրքրական է այդ կարծիքը ժողովրդի, որ անկարող լինելով հասկանալ ժամանակի քաղաքականութեան ներութիւնները և լոկ խաբէութիւն համարելով ալն միջոցները, որ գործադրել էին Ռուսաց մեծամեծները ժողովըրդին դաղթեցնելու համար, ազատ են համարում այդ գործի մասնակցութիւնից մեծ կալսերուհուն և բոլոր մեղքը ձգում են մեծամեծների վերաբ. Հետաքրքրական է և գաղթականների մի կողմից «խաղաղ խընդալով» թողնելն իրեանց սմբէրը, պաղ պաղճաները» և ղրիմից դուրս գալը, միւս կողմից էլ նոցա մէկ տարի «ըռուստաց զիւղ քաղաք մաշուելը, մինչև որ հասնում են «թէնի»-Գօնի ամիը, ըռաստովի հողը» և հիմնարկում են Նոր-Նախշիւանը:

Այս վարդան-գրքի միջից է հանել հանգուցեալ Քերովբէ Քուշնարեանը և ապագրել 1892 թուականի «Բաղմալէպի» Մալիս ամսուայ համարում լալտնի «Քէֆէ քաղաք ծովահալեաց» երգը ²⁴⁾, սորա միջից ենք մենք առել և կցել մեր

²⁴⁾ Հանգուցեալ հ. Քերովբէ Քուշնարեանն իւր սլաւո-

«Նոր-Նախիջևանի գաղթականութեան պատմութեան» և «կափալ քաղաք անըման զրախտի ու Տէր-Խաչատուր եպիսկոպոս որպէս Անտոն Թէրալիդի» երգերը, որոնց բովանդակութիւնը վերաբերում է Ղրիմի, կամ, լաւ է ասել, Քէֆէի Հալերի կեանքին:

Ար Տաղարանը մի փոքրագիր՝ 4×5 սանտ. մեծութեամբ կաշեպատ փաթէ կազմով գիրք է, որ մենք ստացել են Նոր-Նախիջևանցի Մանուկ Մորոզովից: Դա գրուած է մանր գեղեցիկ նօտարգրով մաղաղաթի պէս չղիած փալլուն, նուրբ թղթի վերայ: Դորա մէջ պարունակուած տաղերի (սորազերբը և երգերի սննրի առաջին տառերը գրուած են կարմրադեղ թանաքով, իսկ իւրաքանչիւր տաղի առաջին տառերը գոյնըղգոյն գեղեցիկ գլխադրերով: Թէ երբ է գրուած ձրի ձեռքով և ձրտեղ այդ Տաղարանը, — դժբաղդաբար մենք որոշակի ոչինչ չենք կարող ասել, որովհետեւ ձեռագրի անխնամք կերպով պահուած լինելու պատճառով, դորա կազմը քալքայուել է և մի քանի թուղթ սկզբից և վերջից թափել, կորել են, որոնց հետ անկասկած ընկել, կորել է և այն թերթը, որի վերաէ գրուած է եղել լիշատակարանը: Մենք միայն նաեւում թղթի չատկութեան, գլուխն ձեռն, կարող ենք հաւանականաբար ասել, թէ դա գրուած պէտք է լինի Ժէ դարից ոչ առաջ:

Ար միջնադարեան գրականութեան թէ արձակ և թէ բանաստեղծական ճիւղերը, ինչպէս լատինի է, մինչև ցալսօր դեռ ոչ միայն ուսումնասիրուած չեն, ալլև դոցա, այդ ճիւղերին վերս բերեալ գրուածների ու երկերի պարզ հաւաքածուներն անգամ չունինք տակաւին: Ո՛ւր են մեր գիրք-վաստակոցները, բաղամթիւ բժշկարանները, վարդապետական, վիճաբանական գրուածները, պատմական-կենցաղաւորական լիշատակարանները, տաղերը, գանձերը, մեղեդիները, աւետիսները և ալլ

մութեան մէջ կարծում է, որ իւր ձեռքին գտնուած 1787-ին Նախիջևանում գրուած «Ժողովածուի» մէջ կափալի եկեղեցիներին վերաբերեալ մասն առնուած է կափալում 1756 թուին հեղինակուած «Պատմութիւն Անի քաղաքի ի ձեռն Աբրահա. մու րաբունապետի» ձեռագրից, որ այժմ իբր թէ պահուում է սուրբ Էջմիածնի մատենադարանում: Հալր Քերովթէի «Ժողովածուն», ինչպէս մենք արդէն մեր 14 ծանօթարանութեան մէջ նկատեցինք, մեր «Վարդան — Գրքի» մի ալլ օրինակն է եղել:

ա.դ տեսակ մանր, բայց բազմաթիւ գրուածները, չենք խօսում արդէն բանաւոր գրականութեան մասին, որի հաւաքելու և գրի անցնելու համար դեռ միայն թուլ փորձեր են եղել մասնաւոր անհատների ձեռքով: Դոցա պէտք է որոնել, գտնել զանազան հին ու նոր պարբերական հրատարակութիւնների մէջ և մինչև ցայսօր դեռ չհրատարակուած լիատարարանների ու հնութեան փոշով ծածկուած ձեռագրերի մէջ:

Բացառութիւն կարող են կազմել այդ դէպքում միայն մեր աղուէսագրքերը, որոնց մէջ պարունակուած առակների լիակատար և բարեխիղճ ուսումնասիրութիւնը սորանից մի երկու տարի առաջ կատարուեց ուսուցչապետ Նիկողայոս Մառի ձեռքով, որ ժամանակ և անակնկալ ու շահեկան լայտնութիւններ եղան: Պարզուեց, որ այդ առակները, նախ, դուռ հալ մտքի ինքնուրոյն արդիւնք են, երկրորդ լոյս աշխարհեկաւ մի նոր հեղինակի՝ վարդան Ալեկկոս անուն, որ մինչև այդ ժամանակները ծածկուած էր անլարտութեան թանձր քողով: Ներկայումս նամանաւանդ կարեւոր ու անհրաժեշտ է մեր միջնադարեան բանաստեղծութեան մի ալլ գլխաւոր ճիւղի՝ երգերի, տաղերի, դանձերի, սեղեղիների և աւետիսների մի լիակատար հաւաքածու կազմելը և մանրամասն ուսումնասիրելը, տաղերի, որոնց թիւը խիստ շատ է եղել մեր մէջ և որոնք այնքան մեծ նշանակութիւն ունին մեր աշխարհաբան լեզուի, մեր ներքին ընտանեկան կեանքի ուսումնասիրութեան համար: Ճիշդ է, մեր մէջ եղել են մասնաւոր անհատներ, որոնք ուշադրութեան առնելով և այդ հանդամանքը, փորձեր են արել այստեղից այնտեղից որոնելու, գտնելու և տպագրելու այդ տաղերը և դոցա հիման վերալ ուսումնասիրութիւններ կատարելու, բայց դոքա այնպէս էլ մնացել են փորձեր և երբէք լայն ծաւալ չեն ստացել: Ամենից աւելի այդ անպարիզում աշխատել են Վենետիկի «Բազմալէպ»-ը, Հ. Ղեւտոնդ Ալիշանը, Հ. Գարեգին Սրուանձտեանը, Հ. Արիստակէս Տէվկանցը և նամանաւանդ Գէորգեան ճեմարանի նախկին ուսուցիչ ու տեսուչ պ. Կարապետ Կոստանեանը, որ, սխաժ 1892 թուից մինչև 1898-ը, մանրամասն համեմատութեամբ հրատարակել է երեք պրակ հաւաքածու և երեք հեղինակի Յովհաննէս Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաչի և Գրիգորիս Աղթամարցու երեք հատորիկ գրուածները:

Մեզանում ձեռագիր հաղարանների ու դանձարանների

Քիւր խիստ շատ է և դոցա դռները մի մեծ դժուարութիւն չի ներկայացնում աշխատասիրողի համար. համարեւ մեր առջին մի ձեռագրերի ժողովածուի մէջ կարելի է գտնել մի քանի դանձարան, չենք խօսում արդէն Տաղարանների մասին, որոնցից ամեն տեղ կարելի է գտնել մինչև իսկ մասնաւոր մարդկանց ձեռքում: Բայց մեղ պակասում են աշխատող մշտեքեր ու ձեռքեր, որոնք աղ Տաղարանների ու Գանձարանների միմեանց հետ համեմատելու, երգերի հեղինակների անունները գտնելու, օտար և հալ դաւառական բառերի ու դարձուածների մեկնութիւնները տալու և բառարաններ կազմելու մանրակրկիտ ու տաժանելի աշխատանքին ձեռնարկէին:

Մեր Տաղարանը թէև, ինչպէս ասացինք, սկզբից և վերջից թերի է, բայց և այնպէս իւր լիակատարութեամբ, խմբագրութեան կատարելութեամբ կարող է, ըստ ամենայնի, մեր բոլոր միւս մինչև ցայսօր լայտնի Տաղարանների մէջ պատուաւոր տեղ բռնել, և, ով որ էլ լինի մեր երգերի վերջնական հաւաքածուն կազմողը և ուսումնասիրողը ապագայում, նա չպէտք է անուշադիր թողնէ դորան, Դա ունի իւր մէջ իւր ներկայ դրութեամբ 114 Տաղ (իս ճղ.), որոնք կամ ունին իւրեանց սեփական խորագրերը—«Տաղ վասն ազահութեան», «Տաղ ջրի վերայ է ասացեալ», «Տաղ դատաստանի վերայ», և այլն, կամ անորոշ—«Տաղ սիրոյ», «Տաղ ուրախութեան», «Տաղ զեղեցիկ», «Տաղ աղնիւ», «Գովաստանք», «Մեղեդիկ», «Գանձ է», և այլն, և կամ բոլորովին վերնագիր չունին: Դորա տաղերից շատերն էլ, ինչպէս մեր միւս Տաղարաններինը, հեղինակի անուն չունին. միայն մի քանի տաղերի մէջ վերջում կամ խորագրերի մէջ լիռւած են հեղինակների անունները: Նրգերի վերջուս՝ լիռւած են Թլկուրանցի, Թաթոս, Մարտիրոս, Վարդապետ, Զպուղօղի, Կոստանդին, Յակոբ, Թորոս, Կաֆացի զարիւր Մկրտիչ, Օքսուղ Տէրտէր, Աւետիք, Տէր-Յովհաննէս, խե Յովհաննէս, Սարկաւազ Բերդակցի և Դրիգոր Աղթամարցի անունները, իսկ խորագրերի մէջ—Յովհաննէս, Թլկուրանցի, խե Յովհաննէս, Նաղաշ, Թաղէոս սարկաւազ և Կիրակոս Վարդապետ ²⁶⁾:

²⁶⁾ Այս անունների մէջ Թաթոս և Թաղէոս սարկաւազը մի և նոյն անձն է. մի և նոյն Յովհաննէս Թլկուրանցու անուններն են երևում և Տէր-Յովհաննէս, խե Յովհաննէս և Յովհաննէս:

Մեր Տաղարանի գլխավոր արժանաւորութիւնը, ինչպէս նկատեցինք, նորա լիակատարութիւնը և խմբագրութեան կատարելութիւնն է։ Նորա միջոցով, նախ, կարելի է ծանօթանալ մինչև ցարսօր մեզ անգարտ մի քանի տաղերի, երկրորդ, նորոշումով կարելի է վերականգնել արդէն չալտնի ու տպագրուած շատ տաղերի աղաւաղուած ու պակաս տեղերը։ Այդ վերջին հանգամանքը շատ կարեւոր է, որովհետև մեր տաղերի մեծ մասը բերանէ-բերան անցնելով, աչն աստիճան աղաւաղուել են, որ շատ անգամ չի կարելի մինչև իսկ հասկանալ նոցա միտքը, զենք խօսում արդէն ոճերի ու դարձուածների, տունների լիտ ու առաջ դրուելու, բաղմաթիւ լիտով ժամանակի եղած լաւելումների և չապաւումների մասին, որոնք արդեւք են լինում ընտիր խմբագրութեամբ մի լիակատար հաւաքածու կազմելու ու ոճաբանութեան և լեզուի տեսակետից լուրջ ուսումնասիրութիւն կատարելու կարեւոր գործին։

Թողնելով մի կողմ միւս բոլոր տաղերը, առնենք օրինակի համար, միայն Թլկուրանցու տաղերը։ Պ. Կարապետ Կոստանեանցը դտել, ճշդել ու հրատարակել է մեր միջնադարեան բանաստեղծներից աղբ գլխավորի միայն 19 կտոր տաղերը—16-ը առանձին հատորիկով, երեքն իւր շտղովածուի երրորդ պրակի մէջ։ Անկասկած աղբ հեղինակի երգածները թուով շատ աւելի են եղել, բայց մեր բաղմաթիւ տաղերի մէջ մինչև ցարսօր դեռ անկարելի է եղել ճշդել, իմանալ, թէ աղբ ևս ինչ կամ թի տաղերն են պատկանել նորա գրչին։ Մեր Տաղարանն ահա աւելացնում է նորա երկերի վերաջ ալ ևս երկու երգ—«Յանկարծակի մէկ մի տեսար» սիրող երգը և «Տաղ վասն Աշալի», որոնք չեն երևում այ. Կոստանեանի Թլկուրանցու անունով հրատարակած տաղերի շարքում։ Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել առաջինը, որ աւելի կարճ է, քան թէ երկրորդը։

Յանկարծակի մէկ մի տեսար,
Ար կու ցողալը գունն լերեսէն.
Թուլցալ, ընկալ ի տեսնէն,
Շողալը, կաթէր լուսն ի վզէն։

Աչերն է ծով, ունքն է թուխ ամպ,
Մաղն է դեղձան ոսկի թելէն.
Ինքն ճօճար գէտ գուռի ճեղ,
Հրով ալրէր զերկիր ամէն։

Ճօխազնաց, մանրաքալող,

Հողի ի մարմնէ քակող.

Լուծֆն է ծածկել զամէն աշխարհս,

Շաքար կաթէր իւր քարամէն,

Նրբեմն աչերս ի քեզ դիպաւ,

Նա վառեցաւ զէտ մոմեղէն.

Խելագնաց ի վայր մնացի,

Ջարհուրեցաւ ի տեսնէնս:

Խէլ Յովնաննէս թուլկուրանցի,

Խիստ մի հաներ զոտքդ ի ծրէն.

Աղէկ սուրաթն երբ մեռանի,

Յամբի, գնաց գունն երեսէն:

Բացի ալդ երկու տաղից, մենք մեր Տաղարանում զըտնում ենք ալ ին մի տաղ «Հնցկուն ալլով տեսեր զըմրութ», որ նունպէս կարելի է նոր, չհրատարակուած համարել, եթէ միայն ի նկատի չառնենք զորանից առնուած այն մի քանի տողը, որ մենք չենք հասկանում, թէ ինչպէս և ինչ ճանապարհով են ընկել արդէն խկ հրատարակուած «Լուս երեսացդ է խիստ փափուկ» տաղի մէջ: Իսկ որ «Լուս երեսացդ է խիստ փափուկ» տաղի մէջ վիշեւէ քանի տողը եկամուտ են, առնուած «Հնցկուն»-ից,—ալդ երեսում է և ալն հանգամանքից, որ ալդ «Լուս երեսացդ է խիստ փափուկ» տաղը զտնուում է և մեր Տաղարանում, բաց չունի իւր մէջ ալդ տողերը:—

Հնցկուն ալլով տեսեր զըմրութ,

Տպագիրոն ակն ու ճօհէր.

Ինձ լանկասկած ի դէմս ելաւ,

Շունչս քաշեց, դիմելքս էաւ:

Ձի թողի լիս համբերութիւն

Ի տունի դուրս չունիմ զաշար:

Թէ չատ թէ քիչ ի լիտ ձգեմ,

Տեսի, մըտացըս չի գնալր:

Քանի տեսնում, կու սարսափիմ,

Սիրտս ի փորուս կառնու գալար

Ինձ մեղադիր լէր կու լինիք,

Ով որ տեսնու, չի մնալ արդար:

Ձերթ զթիթեռն ի մօմն ի մօտ

Ալրումն եկեր եմ, չկալ ճար:

Ա՛յ իմ զուրի, ես ինչ լինիմ,

Նրբ ալս խոցուս դեղն է դիմար:

Խէլ Յովնաննէս թուլկուրանցի,

Ջօրն ի բուն ընդ ալ մի տար:

Հան ի սրտէդ սէր աշխարհիս,

Տէրն չի տանի զկամէդ ի կատար:

Առ հասարակ, ինչպէս երևում է, այս Տաղարանի թափած-կորած թերթերում շատ բան է եղել թլկուրանցու երգածներին: Ընկած, բայց պահպանուած թերթերից մէկի վերայ մենք, օրինակի համար կարդում ենք, մի անլալտ տաղի սկզբի հետեւալ չորս տողը, որ անկասկած նույնպէս թլկուրանցու գրչի արդիւնքը պէտք է համարել, որովհետեւ նորա վերալ իբրեւ խորագիր դրուած է. «Այլ բանք, լովանիսի ասացեալ է վասն սիրոյ».—

Արեկ արեկ իմ խուպ սուրաթ,
Փառք ու պատիւ քո ստեղծողին.
Եղեմական դրախտէն կու դաս,
Ահնեալ անուն քո...

Նոյն թերթի միւս երեսի վերայ պահպանուել են մի հոգեւոր տաճկախառն երգի վերջին տողերը, որ նույնպէս թլկուրանցու երգած է.—

Ես Յովաննէս Թուլկուրանցի
Ջալս բանս ասի ի վերայ Փրկչին.
Եկն կամաւ ինքն ի խաչին,
Ազատեաց զհոգիքն ի բանտին: 20)

Ե. ՇԱՀԱՋԻՋ

20) Այս տաղը, ինչպէս մենք իմանում ենք պ. Կ. Կոստանեանցի հրատարակած «Յովաննէս Թլկուրանցին և իւր տաղերը» տետրակի լառաջաբանից, իսկապէս տաճկախառն է: Այլ զուտ տաճկերէն և միայն վերջին—տասերորդ տունը հայերէն: Առաջին տունը սկսուում է հետեւեալ խօսքերով. «Քիմ սէլ պէնի պիլ մէզենտի»:

Մեր Տաղարանի խմբագիրը հաւաքելով իւր Տաղարանի մէջ բազմաթիւ երգեր, նոյն ժամանակ հոգ է տարել և երգիչների ձայնի սրութեան մասին: Նա Կիրակոս վարդապետի «Արարիչ էիցս ամէնի» տաղից լետով դրել է և մի խրատ «վասն ձայնի սրանալոյ».—«Առ սալերի խէժ որչափ և կամիս և դիր ի ջուրն որ դրժի. և թող չորս օր և հարէ դնա մատովդ և թող որ ռաւաղի և քաջէ լերեսացն զսափին և զթորթն լետ թափէ և խառնէ ի ջուրն պաղ շաքարով թող որ հալի և մասուրով խմէ որ ի լղեղտ ելնու պառկելուն ժամն. և առաւտն որ սրանալ ձայնտ հրամանաւն Աստուծոյ. ով որ այս բանս անէ որ բանն կատարի թող հալր մեղամ ասէ Աստուած իւր հոգոյն ողորմի»: